

2022

ԲԱԶՄԱՑՈՒՆԿՑԻՈՆԱԿ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ

ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք Էջմիածին քաղաք
Շահոխմյան փ. 75/4-6

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ /լրամշակված/

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ՔՅՈՒՓՐՈՋԵՔՏ» ՍՊԸ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ՝ Կ. ՄԿՐՏՉՅԱՆ

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com



ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԿ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ

ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք էջմիածին քաղաք Շահոհյան փ. 75/4-6

ՇՐՋԱԿԱ ՍԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

/լրամշակված/

«ՔՅՈՒՓՐՈՋԵՔՏ» ՍՊԸ տնօրեն՝

Հ. Վալենյան

Կ. ՄԿՐՏՉՅԱՆ

Ա/Ձ ԱՐԱՍ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | | |
|--------|--|----|
| 1. | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 5 |
| 1.1 | Ձեռնարկողի մասին տեղեկություն | 5 |
| 1.2 | Հապավումներ | 5 |
| 1.3 | Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը | 6 |
| 1.4 | Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը | 7 |
| 1.5 | Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնատեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) | 10 |
| 1.5.1 | <i>Ներկա վիճակի նկարագիր</i> | 10 |
| 1.5.2 | <i>Նախատեսվող գործունեության նկարագիր</i> | 10 |
| 1.5.3 | <i>Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ինժեներական մասի բնութագիր</i> | 12 |
| 1.5.4 | <i>Ջրամատակարարում և ջրահեռացում</i> | 16 |
| 1.5.5 | <i>Էլ. մատակարարում</i> | 16 |
| 1.5.6 | <i>Գազամատակարարում</i> | 16 |
| 1.5.7 | <i>Էներգախնայողության միջոցառումներ</i> | 16 |
| 1.5.8 | <i>Կանաչապատման աշխատանքներ</i> | 16 |
| 1.5.9 | <i>Կանաչ տարածքի ռոտզման ջրապահանջի հաշվարկ</i> | 20 |
| 1.5.10 | <i>Նախատեսվող գործունեության իրավիճակային հատակագիծ</i> | 21 |
| 1.5.11 | <i>Գլխավոր հատակագիծ</i> | 23 |
| 1.5.12 | <i>Շինարարական հրապարակի կազմակերպման հատակագիծ</i> | 24 |
| 1.5.13 | <i>Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց</i> | 27 |
| 2. | ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ | 28 |
| 2.1 | Աշխատանքների կատարման սխեմա..... | 29 |
| 2.2 | Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը..... | 31 |
| 2.3 | Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները..... | 32 |
| 2.3.1 | <i>Նյութերի և բնատեսուրսների օգտագործում</i> | 33 |
| 3. | ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ..... | 34 |
| 3.1 | Ֆիզիկաաշխարհագրական պայմանները..... | 34 |
| 3.2 | Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը..... | 34 |
| 3.3 | Տարածաշրջանի երկրաբանությունը և հիդրոերկրաբանությունը | 35 |
| 2.1. | Տարածաշրջանի հողերի նկարագիրը..... | 36 |
| 3.4 | Կլիման | 37 |
| 3.5 | Օդային ավազան..... | 40 |
| 3.6 | Ջրային ռեսուրսներ | 41 |
| 3.7 | Բուսական աշխարհ | 41 |
| 3.8 | Կենդանական աշխարհ | 42 |
| 3.9 | Մշակույթի և բնության հուշարձաններ | 43 |
| 3.10 | Թափոնների կառավարում | 59 |
| 4. | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ | 60 |
| 4.1 | Ռիսկերի գնահատում | 60 |
| 4.2 | Արտանետումների աղբյուրները | 60 |
| 4.3 | Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն | 60 |
| 4.3.1 | <i>Մթնոլորտային օդ</i> | 60 |
| 4.3.2 | <i>Ջրային ռեսուրսներ</i> | 61 |
| 4.3.3 | <i>Հողային ռեսուրսներ</i> | 61 |
| 4.3.4 | <i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i> | 62 |
| 4.3.5 | <i>Հակահրդեհային միջոցառումներ</i> | 63 |

4.3.6 Աղմուկ և թրթռում.....63

4.3.7 Թափոնների կառավարում.....64

4.3.8 Տարածքի բարեկարգում կանաչապատում.....64

5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ65

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....66

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....69

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ71

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....72

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

| | |
|-----------------------------------|--|
| Ձեռնարկող` | Կ. ՄԿՐՏՉՅԱՆ |
| Իրավաբանական հասցե` | ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք Էջմիածին քաղաք, Վազգեն Առաջինի փողոց 40 շենք 43 բն. |
| Նախատեսվող գործունեության հասցեն` | ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք Էջմիածին քաղաք Շահոյանի փ. 75/4-6 |
| Աշխատանքային նախագծի մշակող` | «ՔՅՈՒՓՐՈՋԵՔՏ » ՍՊԸ |
| Հեռախոս` | +374 43 555552 |
| Նախնական գնահատման հայտի մշակող` | Ա/Չ Արամ Գալոյան ՀՀ ք. Երևան Սևանի փ. 2. 86/2 galoyan.aram@gmail.com |
| Հեռախոս` | +374 99994222 |

1.2 Հապավումներ

ՀՀ` Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ` Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ` Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ` պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք Էջմիածին քաղաք Շահոյմյան փ. 75/4-6 հասցեում:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան¹:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագիծը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող

¹ ՀՀՇՆ 30-01-2014 ՔԱՂԱՔԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՍՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ ՀՀՇՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈՎԱՅՆԱՍՏԵՂԻՆԵՐ ՔԱՂԱՔԱՇԽՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021Թ. ՄԱՐՏԻ 31 ԹԻՎ 372-Ն ՀՐԱՄԱՆ

գործունեության նախնական գնահատման փուլում Վախարշապատ քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Արմավիրի մարզ, ք. Վախարշապատ, Շահոհյան փ. 75/4-6 հասցեում հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը

հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.

«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2000թ.

«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը,

«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ. N 72-Ն որոշումը

ՀՀ ջրային օրենսգրք 2002թ.

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես

նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշում:

ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշում:

ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N 764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի նկարագիր

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք Էջմիածին քաղաք Շահոյիմյան փ. 75/4-6 հասցեում:: Հողամասի մակերեսը կազմում է 0.6953 հա՝ կադաստրային ծածկագիր՝ 04-002-0874-0074:

Հողատարածքը գտնվում է Շահումյան և Կարրճիկյան փողոցների հատման հատվածում, խառը կառուցապատման գոտում, ազատ է կառուցապատումից:

Հողամասի բնութագրերը՝

- հողատարածքի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման
- գրանցված իրավունքի տեսակը՝ ընդհանուր համատեղ սեփականություն

Հողի բերրի շերտը հողատարածքում բացակայում է:

1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, Շահումյան փողոց 75/4-6 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագիծը կատարված է 28.07.2022թ. տրված N CPP0-0000-2133 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Նախագծով նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր Տարածքի մակերեսը 6953 քմ է: Համալիրը բաղկացած է մեկ ստորգետնյա և տասներկու վերգետնյա հարկերով թվով չորս մասնաշենքերից, ինչպես նաև ստորգետնյա երկու մասնաշենքերից:

Ստորգետնյա հարկում նախատեսվում է տեխնիկական տարածքներ և կրկնակի նշանակությամբ ավտոկայանատեղ, որը անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց:

Առաջին հարկը նախատեսվում է որպես հասարակական նշանակության տարածք, իսկ 2-ից 12- րդ հարկերը՝ որպես բնակելի: Հասարակական տարածքների սպասարկման համար նախատեսված է արտաքին ավտոկայանատեղիներ:

Բնակելի հարկերում նախատեսվում է կառուցել 298 բնակարան: Նկուղային հարկերում նախատեսվում է 120 մեքենաների համար ավտոկայանատեղիներ: Ստորգետնյա ավտոկայանատեղին ունի մեկ մուտք: Առաջին հարկը նախագծված է 4.50մ բարձրությամբ իսկ վերգետնյա հարկերը 3.30մ:

12-րդ հարկում նախատեսվում իրականացնել է կանաչապատ տերասաներ:

Բոլոր մասնաշենքերում նախատեսված է մեկ աստիճանավանդակ՝ մեկական մարդատար և բեռնատար վերելակներով: Աստիճանավանդակները նախատեսվում է բարձրացնել մինչև հարթ տանիք, իսկ աստիճանավանդակի և վերելակի մասի տանիք բարձրանալու համար նախատեսվում է մետաղական սանդուղք:

Բոլոր աստիճանավանդակների համար նախատեսվում է տեղադրել հակահրդեհային դռներ: Նախատեսվում է իրականացնել հարթ տանիք, կազմակերպված ներքին ջրահեռացմամբ: Նախագծով նախատեսվում է բարեկարգել տարածքը՝ կանաչապատել, իրականացնել ճանապարհներ և եզրամայթեր:

Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների կազմակերպում՝

-3,4 նիշում առկա է կրկնակի նշանակությամբ ավտոկայանատեղ, որը անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց մինչև 1500 մարդու համար: Այս հարկում նախատեսված է սանհանգույցներ ապաստարանից օգտվողների համար, ինչպես նաև նշված տարածքը նախատեսվում է ապահովել օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ:

ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

| NN | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ | ՔԱՆԱԿԸ | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|----|--|----------------|--------|--|
| 1 | ՏԱՐԱԾՔԻ ՄԱԿԵՐԵՍԸ | ՔՄ | 6953 | - |
| 2 | ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ | ՔՄ | 4560 | ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ ԿԱԶՄՈՒՄ Է ՏԱՐԱԾՔԻ ՄԱԿԵՐԵՍԻ 65.6 %-Ը |
| 3 | ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | ՀԱՏ | 120 | ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԿԱԶՄՈՒՄ Է ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ 40 %-Ը |
| 4 | ՎԵՐԳԵՏՆՅԱ ՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ | ՔՄ | 2400 | ՎԵՐԳԵՏՆՅԱ ՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ ԿԱԶՄՈՒՄ Է ՏԱՐԱԾՔԻ ՄԱԿԵՐԵՍԻ 34.5 %-Ը |
| 5 | ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ | ՔՄ | 2780.0 | ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄԸ ԿԱԶՄՈՒՄ Է ՏԱՐԱԾՔԻ ՄԱԿԵՐԵՍԻ 40 %-Ը |
| 6 | ԱՆՁՐԱՆՑԻԿ ՏԱՐԱԾՔԻ ՄԱԿԵՐԵՍԸ / ՄԱՅԹԵՐԸ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ / | ՔՄ | 1773.0 | ՄԱՅԹԵՐԸ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՏԱՐԱԾՔԻ ՄԱԿԵՐԵՍԻ 25.5 %-Ը |

Նախագծման ընթացքում կառուցապատողը առաջնորդվել է ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության եվ էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշմամբ:

Նախագիծը մշակված է համաձայն.

ՀՀԾՆ 30-01-2014 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

ՀՀԾՆ 31-01-2014 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ. ՄԱՍ1 .ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ

ՀՀԾՆ 21-01-2014 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀՀԾՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021Թ. ՄԱՐՏԻ 31 ԹԻՎ 372-Ն ՀՐԱՄԱՆ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից կմշակվի համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագիծ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

1.5.3 Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ինժեներական մասի բնութագիր

1. Օդափոխություն և ջեռուցում

Ա. ավտոկայանատեղիներ

Ավտոկայանատեղիների օդափոխման համար նախատեսված են առանձին ներածման և արտածման համակարգեր ամեն հարկի համար: Ըստ նորմատիվների արտածման համակարգի ապահովելու է 2 պատիկ օդափախություն: Ներածումը կկազմի արտածման համակարգի 80%: Ներածումը կատարվում է վերին զոնայից: Արտածումը կատարվում է կեսը վերին զոնայից, կեսը ներքևի: Ավտոկայանատեղի տարածքում կտեղադրվի CO տվիչներ: Այս տվիչները կմիացնեն և կանջատեն օդափոխման համակարգերը:

Ավտոկայանատեղի ջեռուցումը կապահովվի 5 աստիճան: Ջեռուցումը կկազմակերպվի օդով ջեռուցման ագրեգատներով:

Բնակելի հատվածի ջեռուցումը և հովացումը կազմակերպված է ֆանկոյլներով: Ֆանկոյլների ջերմաստճամատակարարումը նախատեսված է 4 խողովականի համակարգով: Այս համակարգը թույլ է տալիս անցումային սեզոններին միաժամանակ աշխատացնել ջեռուցման և հովացման համակարգերը:

2. Կենցաղային կոյուղու համակարգ**Ա. Կենցաղային կոյուղու ներքին ցանց**

Կենցաղային կոյուղու ներքին ցանցը իրականացվում է համապատասխան ճարտարապետական հատակագծային լուծումների: Այն նախատեսված է Ø50 և Ø110 մմ տրամագծի խողովակներով, որոնք միացված են Ø110 մմ տրամագծի կանգնակներին: Կանգնակները կայանատեղի առաստաղի տակով կապվում են միմյանց և դրսում միանում համապատասխան դիտահորերին:

Բ. Կենցաղային կոյուղու արտաքին ցանց

Կենցաղային կոյուղու բակային ցանցի և կոյուղու հեռացման համար հիմք են հանդիսանում կոյուղու միացման կետի տեխնիկական պայմանը, ուղղաձիգ հատակագծումը և տեղանքի գեոդեզիական հանույթը: Կոյուղու թողարկների ելքերի վրա տեղադրվում են դիտահորերը, որոնք միմյանց միանալով կոյուղու ելքերը տեղափոխում են դեպի տեխ պայմանով նախատեսված վայր: Արտաքին ջրատարի խողովակների տրամագծերը և կոշտությունները հաշվարկվում են համապատասխան ելքերի և թեքությունների հիման վրա: Դիտահորերի քանակը դրամագիծը և խորությունը ընտրվում է երայնական պրոֆիլի և հատակագծային լուծումների ժամանակ համապատասխան նորմերի:

3. Անձրևաջրերի հեռացման համակարգ

Անձրևաջրերի հեռացման համակարգը բաժանվում է 2 փուլի, տանիքի և բակի անջրևաջրերի հավաքման ցանց և անջրևաջրերի հեռացման գիծ, որը պետք է միացվի սպասարկող կազմակերպության կողմից տրված տեխնիկական պայմանի կետին: Տանիքների ջրահեռացման համակարգը իրականացվում է ճարտարապետի կողմից այն

կարող է կազմակերպված լինել ներքին կանգնակների միջոցով կամ արտաքին ֆասադով տեղադրված կանգնակներով:

Բակային ցանցը իրենից ներկայացնում է 20x20 սմ կետային ջրընդունիչներով, որոնք տեղադրված են լինում հիմնականում կանգնակների տակ և բակում ցածրադիր կետերում գծային կամ կետային ջրընդունիչներով, որոնք հավաքելով բակի և տանիքի անձրևաջրերը դիտահորերի մեջ հեռացնում են դեպի կոլեկտոր: Բակային ցանցի իրականացման համար հիմք է հանդիսանում հորիզոնական հատակագծային լուծումները և ճարտարապետի կողմից մշակված տանիքների ջրահեռացման հատակագծերը:

Անձրևաջրերի հեռացման խողովակների նվազագույն տրամագիծը ընդունվում է 200 մմ, խցանումներից խուսափելու համար:

4. Ջրամատակարարման և հակահրդեհային համակարգ

Ա. Ներքին և արտաքին ջրամատակարարման ցանց

Ներքին ջրամատակարարման ներքին ցանցը ավտոկայանտեղից պոմպերի միջոցով ջուրը կանգնակներով մղում է դեպի վերևի հարկեր: Հարկերում ներքին ցանցը իրականացվում է համապատասխան ճարտարապետի կողմից մշակված հատակագծային լուծումներով: Իսկ արտաքին ցանցը միանալու է տեխ պայմանով տրված միացման կետին և այնտեղից բերվի դեպի կառույց, որտեղից էլ միանա ներքին ցանցի պոմպերին և հակահրդեհային ջամբարին:

Բ. Հակահրդեհային համակարգ

Հակահրդեհային համակարգի համար նախատեսվում է հակահրդեհային ջրամբար և պոմպակայան ավտոկայանատեղիում, որտեղից կանգնակներով ջուրը բարձրանում է դեպի վերևի հարկեր, որտեղ նախատեսվում է հակահրդեհային ծորակներ և պահարաններ:

5. Ներքին էլեկտրամատակարարման և լուսավորության ցանց (նեղ)

Ներքին լուսավորության իրականացում համաձայն ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» ինչպես նաև ՀՀ-ում գործող այլ շինարարական նորմերի պահանջների: Լուսավորության ցանցն իր մեջ պետք է ներառի միայնցից անկախ սնվող և գործող աշխատանքային և տարահանման-վթարային լուսավորության ցանցեր: Ներքին լուսավորության ցանցի նախագծման համար նախատեսել լուսադիոդային լուսատուներ: Վերջինների ընտրության ժամանակ հաշվի առնել ՀՆ N 2.2.4-008-06 «Աշխատատեղերում ինֆրաձայնի հիգիենիկ նորմերը», ՀՆ N 2.2.4-010-06 «Աշխատատեղերում ուլտրաձայնի հիգիենիկ նորմերը» և կիրառել ՀՀ կառավարության 2021 թ. հունվարի 21-ի N 77 որոշումը: Էներգախնայողության բարձրացման նպատակով սենքերում լուսավորության ցանցն իրականացնել առանձին խմբերով, իսկ աստիճանավանդակներում և ստորգետնյա ավտոկայանատեղիներում նախատեսել շարժման տվիչներ:

Ներքին էլեկտրամատակարարման ցանցի իրականացում: Նախատեսել վարդակային ցանցեր աշխատանքային և կենցաղային սարքերի սնուցման համար: Առանձին խմբով սնուցումներ նախատեսել ՀԻՀԱՀ, ՏՀԶՀ և ԻՑ սնուցման համար:

Ներքին էլեկտրամատակարարման և լուսավորության ցանցերն իրականացնել եռաջիղ հաղորդալարերով / մալուխներով՝ երրորդ ջիղն օգտագործելով հողանցման համար: Լարանցումն իրականացնել փակ, կախովի առաստաղների հատվածում՝ ծալքախողովակների մեջ: ՆԷԼ ցանցերի սնուցման համար հարկերում նախատեսել հարկային լուսավորության վահաններ՝ նվազագույնը մեկ հատ յուրաքանչյուր հարկում:

6. Ուժային եւ հողանցման ցանց

Նախատեսել առանձին ուժային մալուխներ վերելակի, օդափոխության համակարգերի և հարկային լուսավորության վահանների էլեկտրամատակարարում համար: Էլ. վահանակային սենյակից ուժային մալուխների խմբային անցկացումն իրականացնել հատուկ դրա համար նախատեսված հորանի միջով:

Շինության հարակից տարածքում նախատեսել հողանցման կոնտուր՝ կրկնակի հողանցման համակարգի համար:

7. Տեսահսկման և ձայնագրման համակարգ (տհձհ)

Նախատեսել ավտոկայանատեղի, միջանցքների, շինության արտաքին տարածքի, գլխավոր և օժանդակ մուտքերի տեսաձայնագրում, իրական ժամանակում առցանց տեսահսկման հնարավորությամբ: Նախատեսել HD որակի տեսախցիկներ՝ գիշերային տեսաձայնագրման հնարավորությամբ:

8. Հրդեհի ինքնավար հայտնաբերման և ազդարարման համակարգ

Նախատեսել շինության տարածքում հրդեհի ինքնավար հայտնաբերման և ազդարարման համակարգ (ՀԻՀԱՀ)՝ համաձայն ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն», ՀՀՇՆ II-8.04.02.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա», ՀՀՇՆ IV-11.03-03-02 (ՄՄՆ 2.02-05-2000) «Ավտոկայանատեղեր», ինչպես նաև ՀՀ-ում գործող այլ շինարարական նորմերի պահանջների: Համակարգի համապատասխան հատվածներն ինտեգրել էլեկտրավահանակային ու հեռահաղորդակցության սենյակների ինքնավար հրդեհաշիջման համակարգի հետ: ՀԻՀԱՀ-ը պետք է ունենա օդափոխության և ծխահեռացման համակարգերին ինտեգրման հնարավորություն:

9. Հրդեհաշիջման համակարգ (ՀՇՀ)

Ավտոկայանատեղիներում նախատեսել տեղային (անհատական) գործարկմամբ փոշիային հրդեհաշիջման մոդուլներ: Իսկ էլեկտրավահանակային և հեռահաղորդակցության սենյակներում նախատեսել կենտրոնացված գործարկմամբ գազային հրդեհաշիջման համակարգ:

1.5.4 Ջրամատակարարում և ջրահեռացում

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն:

Ջրամիացումը և ջրահեռացումն իրականացվելու է <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ կողմից տրված Ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմաններին համապատասխան /կցված հավելվածների բաժնում/:

Ջրամիացման կետ՝ Կարճիկյան փողոց, գործող ջրագից:

Ջրահեռացման կետ՝ Կարճիկյան փողոց, գործող կոյուղագիծ:

1.5.5 Էլ. մատակարարում

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի էլեկտրամատակարարումն հնարավոր է իրականացնել «Էջմիածին» 110/35/10Կվ ե/կ-ի բջիջ 15 10Կվ ուղղության Կ. Մկրտչյանին պատկանող ենթակայանի 0.4Կվ բ/վ-ից, համաձայն <<ՀԵՅ>> ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի /կցված հավելվածների բաժնում/:

1.5.6 Գազամատակարարում

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի գազամատակարարում իրականացնելու համար կառուցապատողը դիմել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ:

1.5.7 Էներգախնայողության միջոցառումներ

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում.
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով.
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ /пеноплекс/:
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

1.5.8 Կանաչապատման աշխատանքներ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները իրականացնելու համար կառուցապատողի կողմից կնախապատրաստվի «Տարածքի բարեկարգման և արդիականացման նախագիծ», որը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Բուսականության տեսակային և քանակային կազմը ներկայացված կանաչապատման սխեմայի վրա:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ռոտզման համակարգի անցկացում,

- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,

- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,


- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,

-Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Նախատեսվում է կազմակերպված ռոտզման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ռոտզմնա հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ռոտզում կազմակերպելու համար: Կանաչապատ տարածքների ռոտզուման ջուր կմատակարարվի միանալով քաղաքային ռոտզման ցանցին, համաձայն համայնքի կողմից հաստատված կանաչապատման և արդիականացման նախագծի:

Ստորև ներկայացված է կանաչապատման սխեման



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

--- ԳՈՂԻ ՍԱՐՄԱՆԱԳԻԾ ԸՍՏ ԿԿԱՅԱԿԱՆԻ



ՀԱՅԵՆԻ



ՍԿԱՑԻՎ



ՍՅՈՒՆԱՁԼ ԹՈՒՅՎ



ԳՆՐԱՁԼ ԹՈՒՅՎ



ԾՈՐԵՆԻ



ԻՆԵՆԻ

ՍԻԶԱՍՈՐԳ 3771.8 ՔՄ
1 մ²ում ՆԱԽՍՏԵՆԱԿՈՒՄ է 0.033կգ խտոի սերմ,
ընդհանրաճը 125կգ խտոի սերմ



ՍՅՈՒՆԱՁԼ ԹՈՒՅՎ 13 ՀԱՏ



ՏՆԿՎՈՂ ԱԿՈՇԱԿ 9 ՀԱՏ



ՏՆԿՎՈՂ ԳՆՐԱՁԼ ԻՆԵՆԻ 110 ՀԱՏ



ԾՈՐԵՆԻ 100 ՀԱՏ




ՏՆԿՎՈՂ ՀԱՅԵՆԻ 10 ՀԱՏ



ԳՆՐԱՁԼ ԹՈՒՅՎ 50 ՀԱՏ



ՏՆԿՄԱՆ ՍԽԵՄԱ



| | | | | |
|--|---|----------------|----------|---|
| | ՆԱԽԱԳԾԻ Գ.Գ. | Տ. ԶԱՍՄԱՐՅԱՆ | Տ. Զ. Զ. | ԲԱԶՄԱՖՈՐՄԱԿՐՈՆԱԼ ԲՆԱԿԵՐԻ ՀԱՍՏԱԿԻՐԻ ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱԶՄՈՒՄՑ ԳՈՏԻՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳԱՆ ՆԱԽԱԳԻԾ Կրկնավորի մարզ, Վարդապետ Խանյան Էջմիածնի շրջան, Շահումյան փողոց թիվ 754-6 Պատվիրատու: Կարեն Մկրտչյան |
| | ՆԱԽԱԳԾԵՑ | Ս. ԽՈՒՐՇՈՒՂՅԱՆ | Ս. Խ. | |
| | <<ՔՅՈՒԹՐՈՂՅԵՔԹ>> ՄՊԸ ՏՆՕՐԵՆ Տ. ԶԱՍՄԱՐՅԱՆ | | Տ. Զ. Զ. | |

1.5.9 Կանաչ տարածքի ռոռզման ջրապահանջի հաշվարկ

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ռոռզման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ռոռզում՝ $n_6 = 0.006$ մ³/մ²

Ոռռզման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$


որտեղ՝ S – ռոռզվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 2780$ մ²,

K – ռոռզման օրական հաճախականությունն է, K = 2

t - ռոռզման օրերի պլանավորված թվաքանակն է, t = 175 օր

$$W_{u.3} = (0.006 \times 2780) \times 2 \times 175 = \underline{\underline{5838}} \text{ մ}^3/\text{տարի}$$

1.5.10 Նախատեսվող գործունեության իրավիճակային հատակագիծ




ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ


| | |
|--|--|
| | ԿԱՌՈՒՅԱԿՄԱՇՎՈՂ ՏԱՐԱԾՔ ԳՈՂՈՄԱՍԻ ՍԱՐՏՄԱՆԱԳԻՏ ԸՍՑ ԿԱՌԱՅՈՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՑԻ |
| | ԳԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅԱԿՄԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔ |
| | ՆԱԽԱՑԵՑԱԿՈՂ ԲԱԾՄԱՐԱՄԱՐՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ |

ԳԼԽԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ



| | | | |
|------------------------|------|------|--------|
| ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ | ՍՄՄ | ԹԻՆԹ | ԹԻՆԹԵՐ |
| ԳԼԽԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ | Ճ.Մ. | 2 | 10 |

1.5.11 Գլխավոր հատակագիծ



1.5.12 Շինարարական հրապարակի կազմակերպման հատակագիծ

ՃԱՆՈՅՈՒԹՅՈՒՆ


1. ԵՒՆ ԶՐԱՊՈՐՏԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳԱՄԱՐ ԳՆԱՀԱՏՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐՄԵՆ ԶՐԱՆԵՑՎՈՒՄ Է 158,0 ԱՄ ՏԱՐԱԾՔ:
2. ԵՒՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՊԱՆԱԿՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԵՒՆ. ԶՐԱՊՈՐՏԱԿԸ ՄՊԱՐՈՎԵԼ ԳԱԿԱՐԴԵՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԱՆԿՏԱՆԱԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԵՎ ԱՍՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ:
3. ԵՒՆԱՐԱՐԱԿԱՆ ԶՐԱՊՈՐՏԱԿԸ ԳՈՏԵՎՈՐՈՂ ՊԱՏՆԵՇԻՆ ՄՐՏԱՔԻՆ ԿՈՐԱԻՑ ԵՐԵՎԱՅՈՂ ՎԱՅՐՈՒՄ ԱՆՔՐԱԺԵՑ Է ՓԱԿՑԵԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏՏԱՈՒ:
4. ԵՒՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԱՄԱՐ ՈՐՊԵՆ ՏԱՐԵՐՈՎԱ ԸՆՏՐՎԱԾ Է «Галичанин» КС-65713-1 ԱՎՏՈՎՈՐՈՒՄ ԵՎ КВ - 408 ԱՍՏՐԱՎԱՅԻՆ ՎԵՐԱՄԱՐՈՂ ԿՈՐԽԸ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹՅԱՑՈՒՄ ԶՎՅԱԼ ՏԵՂԵԿՎԱՆ ՄՊԱՐՈՎԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԵԿՎՈՏՆԵՍԱԿԱՆ ԱՎՏԱՌՈՒՄՆԵՐԻՑ ԵՆՆԵԼՈՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ Է ՕԳՏԱՎՈՐԵԼ ՆՐԱՏԻՑ ՄԵԿԸ ԿԱՄ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ԶՈՒԿԱՐԵՈ ՓՈՆԱՐԻՆԵԼ ՄԵԿԸ ՄՅՈՒՄԿ: ՎԵՐԱՆՆԵՐԻ ՕԳՏԱՎՈՐՈՒՄԸ ՆՈՐՄԱՅԱՎՈՐԱՑ ԾԷ:

ՉՈՐԱՅԻՆ ՃԱՎԱՆԵՐ

- Գրունտների քանդում 25 053 խմ տեղափոխումով
- Գրունտների հետ լիցք 4 130 խմ
- Շինարարական աղբ 140 խմ տեղափոխմամբ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ

| | |
|--|--|
| | Կառուցվող շինություն |
| | Ցրանադրության միջոցների առաջադրված սահմանափակում |
| | Շին հրապարակի մուտք ելք |
| | Ավտոմեքենաների շրջադարձի տեղանակ |
| | Ժամանակավոր տեղադրվող մետաղե վահանակային պատ |
| | Ժամանակավոր հետիոտն ամվտանց ժամապարհ |
| | Աշխատանքի վտանգավոր սահմանագիծ |
| | Ավտոտրանսպորտի վնասված կետ |
| | Գնահատված վնասված |
| | Լուսարձակներ |
| | Ժամանակավոր տաղավարներ |



ՇՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳՐ


| № ընթ | Անվանում | Չափ. միավ. | Քան. | Ծանոթություն |
|-------|-------------------|------------|------|--------------|
| 1 | Գրանցման | Քառ. | 3 | |
| 2 | Գնահատման | Քառ. | 6 | |
| 3 | Գնահատի շրջանց | Քառ. | 3 | |
| 6 | Լողարան | Քառ. | 3 | |
| 6 | ԲՈՂ գուգարան | Քառ. | 3 | |
| 7 | Աղբի տարանցներ | Քառ. | 6 | |
| 8 | Լուսարձակներ | Քառ. | 36 | |
| 9 | Գնահատի վնասված | Քառ. | 6 | |
| 10 | Բարձր պահեստ | Քառ. | 3 | |
| 11 | Լյուրեղի պահեստ | Քառ. | 3 | |
| 12 | Ծածկ | Քառ. | 3 | |
| 14 | Շինանյութի պահեստ | Քառ. | 3 | |

ՄԵԲԵՆԱՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՄԱՐԱՆՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳՐ


| № ընթ | Անվանում | Մակնիշ | Քան. | Ծանոթություն |
|-------|----------------------|----------------|------|--------------|
| 1 | Անտաքիտային կտուց | КВ - 408 | 2 | կամ համարժեք |
| 2 | Ավտոմեքենա | КС-65713-1 | 2 | ըստ պահանջի |
| 6 | Բետոնաձեղի պոմպ | - | - | ըստ պահանջի |
| 6 | Ինքնաթիռի ավտոմեքենա | МАЗ 5550 | 3 | կամ համարժեք |
| 7 | Ինքնաթիռի ավտոմեքենա | КАМАЗ 5551 | 3 | կամ համարժեք |
| 8 | Էլ. եռափուստ աղբ | СТН 500 | 6 | կամ համարժեք |
| 9 | Շարժական կոնկրետ | SHB - 55 B | 1 | ըստ պահանջի |
| 9 | Էքսկավատոր | Hyundai 170W-7 | 2 | ըստ պահանջի |
| 10 | Բուլդոզեր | | 1 | ըստ պահանջի |
| 11 | Կախովի հարթակներ | | 36 | ըստ պահանջի |

| | | | | | | | |
|--|--------------|-------------|--|---|-----|------|--------|
| | ՆԱԽԱԳՈՒ Գ.Ճ. | Ե. ՔԱՍԱՐՅԱՆ | | ԲԱԶՄԱԿԱՎՈՐԱՆ ԲԱԶՄԱՅՈՐԿՈՒՄԸ ԲԱՍԿԵԼ ԳՆԱՀԱՏՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ | | | |
| | ԵՎ ԻՆՏԵՆՐ | Ե. ԽԱՉԻՅԱՆ | | ՊԱՏՆԵՇ՝ ՄՐՏԱՔԻՆ ԱՍՐՔԱՎՈՐՈՒՄ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԳԱՄԱՐ ԳՆԱՀԱՏՅԱՆ ԶՐԱՆԵՑՎՈՒՄ ԵՎ ԱՍՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍ | | | |
| | | | | ՇՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍ | ՄԱՍ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | ՇՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍ | ՄԱՍ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | «ՔՈՒՐՈՐՈՑԵՔ» ՍՊԸ ԵՐՈՒՆ Ե. ՔԱՍԱՐՅԱՆ | | | |
| | | | | ՇՆԱՐԱՐՈՒ ԶՎՅԱԼՆԵՐ | ԵՎ | ԵՎ-Բ | 22 |

ՇՆՆ. ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ Ս 1:500




| | | | | | | |
|---|--------------|-------------|---|--|------|-------|
| | ՆԱԽԱԳԻՒ Գ.Ճ. | Ե. ՔԱՍԱՐՅԱՆ | ԲԱՅՄԱՐԱԿԱՐԱՆ ԲԱՅՄԱՅՈՒԿՅԻՏՈՒՄԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԳԱՄԱԼՈՒԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻՉ ԴԱՍԵՐ ՄԱՍՆԵՐԻ ՄԱՐԻ, ԿԱՐԳՈՒՄԱՆ ԳԱՄԱՐԱՆ, ԷԶՄԱՍԻՆ ԶԱՄԱՆ, ՇԱՌՈՒՄԱՆ ՓՈՂԱՆ ԵՒ ԿՏԱԿԵ ԴԱՍՉՔԱՆՈՒՄ ԿԱՆԵԼ ՄԱՐԿՈՒՄԱՆ: | ՄՄՄ | ԹՇԹԹ | ԹՇԹԹԹ |
| | ՇՆՆ ԻՆՏԵՆՏ | Ե. ՆԱՍԻՉՅԱՆ | | ՇՆՆԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԱՆ ՄԱՍ ՇՆՆ. ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ Ս 1:500 | ՇՆՆ | ՇՆՆ |
| <<ԶԵՆՈՒՄՆԵՐԵՑ>> ՄԱՐԻ ՇՆՆՈՒՄ Ե. ՔԱՍԱՐՅԱՆ | | | | | | |



| | | | | | | |
|--|---|-------------|--|--|--------|-------|
| | ՆԱԽԱԳԻ Գ.Ճ. | Ե. ՔԱՍԱՐՉԱՆ | | ԲԱՑՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲԱՑՄԱՅՈՐԿԱԾՈՒՄԱԼ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԻՑ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍ ԿԱՑՄԱԿԵՐՊՈՒՄ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ Մ 1:500 ՇՆ. ԳՐԱԴՍԱՐԱԿԻ ԿԱՑՄԱԿԵՐՊՈՒՄ ԳՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ Մ 1:500 | | |
| | ՇՎ ԻՆՏԵՆԵՐ | Ե. ՆԱԽԻՉԱՆ | | | | |
| | <<ԲՅՈՒԹՈՐՈՇԵՐԵՑ>> ՄՈՉ ԵՎՈՐԵՆ Ե.ՔԱՍԱՐՉԱՆ | | | | | |
| | | | | ՄՄԱ | ԹԵՐԹ | ԹԵՐԵՐ |
| | | | | ՇՎ | ՇՎ - 9 | 22 |

1.5.13 Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ



ԸՆՎԱՆՈՒՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԵԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ - 34 ԱՄԻԱ

| | | | | | | | |
|--|--------------------------------------|-------------|--|--|-----|------|-------|
| | ՆԱԽԱԳՈՒ Գ.Ճ. | Ե. ԲԱՍԱՐՅԱՆ | | ԲԱՑՄԱՐԱԿԱՐԱՆ ԲԱՑՄԱՅՈՒԿՑՈՒՄԸ ԲԱՆԿԵՐԻ ԲԱՄԱՆՈՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻՑ | | | |
| | ՕԿ Ինժեներ | Ե. ԽԱՉԻՅԱՆ | | ՊԱՅԵ՛՝ ՄՈՐԱԿԵՐԻ ԱՐԸ, ԿԱՐՊՈՐԱՏԻ ՊԱՍՏԱԿ, ԷՍԽԱՌԿԻ ԶՈՒՅՑ, ՇԱՐՈՒՑՄԱՆ ՕՐՈՒՑ ԵՎ ԿՏԻՎԱԿԱՆ ՊԱՅԵ՛ՐԱՍՏԻ՝ ԿԱՐԵՆ ԱՌՈՅՑՄԱՆ | | | |
| | <<ՅՈՒՐՈՒՄՆԵՐԵ>> ՄՈՒ ՏՈՐԵՆ Ե.ԲԱՍԱՐՅԱՆ | | | ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՑՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍ | ՄԱՍ | ԹԵՐԹ | ԹԵՐԵՐ |
| | | | | ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ՕԿ | ՕԿ-7 | 22 |

2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարծքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կոունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1©Աշխատանքների բնույթից ելնելով^ա բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2©Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի« աշխատանքների ընդհանրացված փուլի» կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3©Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների« աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1©Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ« կոշիկ)« համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում« լուսավորում« օդափոխում« պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)« սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով^ա գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2©Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3©Աշխատանքի պաշտպանության^a անվտանգության տեխնիկայի» արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահիդրոհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4.Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման« հրահանգման ժամանակին և որակով անցկացման« անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման« արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ շահագործման ժամանակ 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

2.1 Աշխատանքների կատարման սխեմա

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 34 ամիս:

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվում են հետևյալ աշխատանքները՝ տարածքի համահարթում,

- ժամանակավոր ցանկապատի տեղադրում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- երկրաբաշխական բաժանարար ցանցի տեղադրում,
- կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում / անհրաժեշտության դեպքում/,
- հողային և կառուցման աշխատանքներ մինչև զրոյական նիշ,
- միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Հողային աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեքենայացված եղանակով՝ KOMATSU PC 400-7 կամ Hyundai 170W տիպի էքսկավատորով, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Մշակված գրունտը պահպանվում է փորվածքների ետլիցքի նպատակով, մյուս զգալի մասը՝ տեղափոխվում:

Ետլիցքը անհրաժեշտ է իրականացնել շերտային տոփանմամբ ծանր տոփանիչներով, հիմնային շերտը առաջարկվում է ամրացնել EW 216 DH-4 գլոնով խորանարդային գրտնակով կամ CR 3/60 տիպի տոփանիչներով, իսկ շինարարական կոնստրուկցիաների անմիջական մերձակայքում՝ ձեռքի տոփանիչներով:

Համահարթման և արտաքին ետլիցքի ժամանակ առաջարկվում է կիրառել KOMATSU D37-EX-22 հարթաշերտի 177 մ³ տարողությամբ բուլդոզեր:

Միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների իրականացման համար նպատակահարմար է գույքային կադապարամածի կիրառումը: Կոնստրուկցիաների ամրանավորումը առաջարկվում է իրականացնել ինչպես առանձին ձողերով, այնպես էլ ամրանային կմախքներով և ցանցերով: Բետոնացումից առաջ անհրաժեշտ ստուգել ամրանի միջադիրների և կադապարամածի տեղադրման ճշտությունը, ամրանը պետք է մաքրված լինի կեղտից և ժանգից: Բետոնի խտացումը անհրաժեշտ է իրականացնել խորքային և մակերեսային թրթրիներով: Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում: Բետոնախառնուրդի առաքումը նպատակահարմար է C5-695 ավտոբետոնախառնիներով վերամբարձի միջոցով տեղադրման վայր հետագա տրմամբ:

Միաձույլ կոնստրուկցիաների իրականացումը նպատակահարմար է իրականացնել անջատ եղանակով: Առաջարկելի է տիպարային տեխնոլոգիական քարտերի կիրառումը:

Յուրաքանչյուր շենքի պատող և կրող կոնստրուկցիաների իրականացման համար ընտրված է KB-405 մակնիշի աշտարակային կռունկ /տեխնիկական բնութագիրը տես ՇԿՆ-2 թերթ/: Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրա ժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնն երբ ըստ ՇՆԵՎԿ III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոտրակի ընդունման ակտ):

Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ, նշահարելով դեղին գույնով, ապահովել դիսպետչերական կամ մեկ աշտարակային կռունկի գործողության գոտում բացառել կից շենքի աշտարակային կռունկի գործողությունը տվյալ գոտում/: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Կռունկով բեռի տեղափոխումը բացառիկ դեպքերում գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով կատարվում է շինարարության ղեկավարի գրավոր կարգադրությամբ,

ապահովվելով բեռի անվտանգ տեղափոխումը, անվտանգության ճարտարագետի մշտական ներկայությունը:

Աշտարակային կռունկի մոնտաժումը ե/բետոնե ծածկի սալի վրա կատարվում է նախագծի կոնստրուկտորի հիմնավորված լոկալ հաշվարկով: Աշտարակային կռունկի մոնտաժման աշխատանքները իրականացվում է համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից ըստ կռունկի անձնագրային տվյալների:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քանի որ այս տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ իրականացնել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց զերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ոռոգման ջրով:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձրված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցմել աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

2.2 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

| NN | Անվանում | Մակնիշ | Քանակ |
|----|-------------------------------|----------------------|-----------|
| 1 | Էքսկավատոր | KOMATSU PC 400-7 | 2 |
| 2 | Բուլդոզեր | KOMATSU D37-EX-22 | 1 |
| 3 | Շարժական կոմպրեսոր | ЗИФ-55В | 1 |
| 4 | վերամբարձ ավտոկրունկ | Галичанин КС-65713-1 | 2 |
| 5 | Աշտարակային կտունկ | KB -408 | 2 |
| 6 | Տոփանիչ | CR 3/60 | 2 |
| 7 | Գույքային կադապարամած | կոմպլ. | 2 |
| 8 | Թրթրիչ մակերեսային էլեկտրական | ИБ-91А | 3 |
| 9 | Թրթրիչ խորքային էլեկտրական | ИБ-102А | 3 |
| 10 | Փոխարկիչ թրթրիչների համար | ИБ-4 | 3 |
| 11 | Նոակցման տրանսֆորմատոր | СТН-500 | 2 |
| 12 | Դակիչ ձեռքի էլեկտրական | ИЭ-4709А | 3 |
| 13 | Ձեռքի էլեկտրական դուր | ИЭ-1208Э | 3 |
| 14 | Հղկող մեքենա | ИЭ-2201 | 3 |
| 15 | Թորթագլղոն | НАМИ 3410 | 1 |
| 16 | Ավտոբեռոնախառնիչ | СВ-69В | հաշվարկով |
| 17 | Ավտոբեռոնատար | КрА3-65055 | հաշվարկով |
| 18 | Ինքնաթափ ավտոմոբիլ | МА3-5550 | հաշվարկով |

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

2.3 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Հողային աշխատանքներ՝

Հանույթ՝ 25053մ³

Հետլիցք՝ 4130 մ³

Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Վախարշապատի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր, համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 50 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 6 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 34 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ - 10 մարդ

2.3.1 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\Sigma. i} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 6 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 44 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 884 օր

$$W_{\Sigma. i} = (6 \times 0.016 + 44 \times 0.025) \times 884 = 1057.26 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.2 \text{ մ}^3/\text{օր:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S₁ – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

K₁ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 120

$$U_1 = 500 \times 0.0015 \times 120 = 90 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.75 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 1147.26; մ³/շին. ժամ:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն :

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու և տարածքի ջրցանի համար ջրամատակարարումը կիրականացվի է գոյություն ունեցող ջրատարից, համաձայն Վեոլիա ջուր ՓԲԸ կողմից տրվող տեխնիկական պայմանի, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Աշխարհագրական դիրքը և լանդշաֆտը. Տարածաշրջանի ռելիեֆը հարթ է, հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք ունի բավական հավասարաչափ թեքվածություն: Լանդշաֆտային գոտին կիսաանապատային է՝ անապատային տեղամասերով:

Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենային և պլեյստոցենային բազալտները, տուֆերը և տուֆաբրեկչիաները, որոնք տեղադրված են երրորդական հասակի նստվածքային հաստաշերտերի վրա և ծածկված են ավելի երիտասարդ այրուվիալ-պրոյուվիալ-դելյուվիալային նստվածքներով, հիմնականում կավավազներ, ավազակավեր, ավազներ, կոպճա-մանրախճային նստվածքներ: Տարածաշրջանում արմատական ապարներից տարածված են բազալտները և տուֆերը:

Նախատեսվող գործունեության վայրը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևմտյան մասում: Գեոմորֆոլոգիական տեսակետից դաշտավայրի այդ մասը իրենից ներկայացնում է նախալեռնա-թեքվածքային, թույլ ալիքաձև հարթավայր: Հյուսիսում՝ նախատեսվող գործունեության վայրից դեպի հյուս-արևելք, տարածքը իրենից ներկայացնում է հրաբխային սարահարթ, հատված ձորակներով, ոչ խորը կիրճերով, որոնք հանդիսանում են մթնոլորտային տեղումների կոլլեկտորներ: Ծայրամասային՝ արևելյան և հյուսիս-արևմտյան մասերում տարածքը ընդունում է բլրակային բնույթ:

3.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը տեղադրված է Արարատյան լճակուտակումային հարթավայրի սահմաններում նրա կենտրոնական մասում: Մակերեսը հարթ է աննշան թեքությամբ դեպի հարավ-արևելք: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 867,0–868,0 մետրերի սահմաններում:

Ստորգետնյա ջրերը դաշտային հորատման աշխատանքների ընթացքում բացահայտվել են 6.0-6.5 մետր խարությունների վրա և կայունացել են 6.0-6.3 մետր խորություններում:

Շրջանի և տեղամասի սեյսմիկ ֆոնային արժեքը որոշված է 9 բալ (0.43):

3.2 Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն «ԳԵՈՌԵՄԵՐԶ» ՍՊԸ-ի կողմից իրականացված հետազոտությանների և իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հեռնյալ տարատեսակերը՝

Շերտ թիվ-1 լիցքային գունաչափակապնդված, կոպճա-ավազակավային կազմի, հազվադեպ ճալաքարով և գլաքարերով, շինարարական, տեղ-տեղ կենցաղային թափոններով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.8-1.5 մետր: Տեխնածին առաջացումներ

Շերտ թիվ-2 ճալաքարա-գլաքարային գրունտ կոպիճով, հրաբխային ապարներից, լավ և միջին հղկվածության, տարահատիկ ավազային և ավազակավային լցանյութով մինչև 40%,

փոշենման ավազների նրբաշերտերով, ոսպնյակներով, բներով, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ և ջրհագեցած, տարածումը համատարած է, բացահայտված հզորությունը՝ 11.4 մետր: Չորրորդականի հասակի այլովիա-պրոյուվիալ առաջացումներ

Շերտ թիվ-3 ավազակավ, շագանակագույն, գորշավուն երանգով, պլաստիկ և փափուկ պլաստիկ թանձրության, տեղ-տեղ փափուկ պլաստիկ թանձրության, ճալաքարի և կոպիճի պարունակությամբ մինչև 20%, ավազի բներով, նրբաշերտերով, խոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.8-1.0 մետր: Չորրորդականի հասակի այլովիա-պրոյուվիալ առաջացումներ

Շերտ թիվ 4 ավազ կոպճային և խոշոր մոխրա-դարչնագույն ճալաքարի կոպիճի երբեմն գլաքարերի պարունակությամբ մինչև 20%, կավավազի նրբաշերտերով բներով, փոխր ջրհագեցած տարածումը համատարած է հզորությունը՝ 1.0-1.5 մետր: Չորրորդականի հասակի այլովիա-պրոյուվիալ առաջացումներ 3.

3.3 Տարածաշրջանի երկրաբանությունը և հիդրոերկրաբանությունը

Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենային և պլեյստոցենային բազալտները, տուֆերը և տուֆաբրեկչիաները, որոնք տեղադրված են երրորդական հասակի նստվածքային հաստաշերտերի վրա և ծածկված են ավելի երիտասարդ այլովիալ-պրոյուվիալ-դելյուվիալային նստվածքներով: Այլովիալ-պրոյուվիալ նստվածքների հաստաշերտում առանձնանում են հիմնականում հետևյալ տարատեսակները՝ կավավազներ, ավազակավեր, ավազներ, կոպճա-մանրախճային նստվածքներ: Վերը նշված բոլոր տարատեսակները բնութագրվում են բարդ միահյուսվածքներով, շերտադարձմամբ, կամ էլ աստիճանաբար անցումով մի ֆացիալ տարատեսակից՝ մյուսին: Նրանք չունեն տարածական տեղադրման հաստատունություն և շերտերի հերթականության օրինաչափություն:

Հանդիպում են փոշենման, խտացված և սպիտակահողերի տիպի կավավազներ: Դրանք քիչ թե շատ պարունակում են մանրախիճ, կոպիճ և տարահատիկ ավազ: Սպիտակահողային կավավազները սուֆոզիոն անկայուն են: Խտության տեսակետից կավավազները փոփոխական են: Հանդիպում են պնդացած ենթաշերտեր, իսկ որոշ շերտեր գտնվում են փխրուն հոսուն վիճակում:

Ավազակավերի մեջ՝ կախված հատիկաչափական կազմից, առանձնանում են ծանր, միջին և թեթև տարատեսակները: Բոլոր տարատեսակները հաճախ պարունակում են մանրախճի և կոպիճի միացություններ: Հաճախ հանդիպում են փոշենման ավազակավեր, որոնք անցնում են կավավազների, պարունակում են ավազների ենթաշերտեր և ոսպնյակներ: Ծանր ավազների շարքում հանդիպում են թեթև մոխրանման ավազներ: Որոշ ենթաշերտեր ներկայացված են մաքուր, լավ որակի ավազներով, իսկ որոշները վատ որակի են, ունեն փոշենման տարրերի խառնուրդներ կամ էլ մանրախճի և կոպիճի միացություններ, որոնց պարունակությունը տատանվում է մեծ սահմաններում:

Մանրախճա-կոպիճային նստվածքները խիստ տարբերվում են տարակազմությամբ: Խոշորահատիկ ֆրակցիան ներկայացված է տարբեր մեծության մանրախճով, մանր և միջին

կոպիճով: Հանդիպում է նաև խոշոր կոպիճ: Բեկորները կազմված են բազալտներից, տուֆերից, հազվադեպ խարամներից: Նրանք հիմնականում լավ հղկված են և ունեն կլոր ձև: Մանրախճա- կոպճային գոյացությունները պատկանում են խոշորաբեկորային գրունտներին:

Տարածաշրջանում արմատական ապարներից տարածված են բազալտները և տուֆերը: Բազալտները բնութագրվում են ինտենսիվ ճաքճքվածությամբ և հողմնահարմամբ: Տուֆերը և տուֆավազները քիչ խախտված են: Լավաների որոշ մասը մեծաբեկորային է: Տարածաշրջանը հիդրոերկրաբանական տեսակետից գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում: Ստորերկրյա ջրերը պատկանում են լճա-գետային գոյացություններին և ճաքճքված անդեզիտա-բազալտներին: Ստորերկրյա ջրերի սնուցումը իրականանում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջլավային ջրերի հոսքի միջոցով: Ճնշումնային հորիզոնը տեղադրված է 150-200մ հասնող հավասար խորություններում, ունի բացասական ճնշում (հոսք): Քաղաքի և շրջանի տարածքում հանդիպում են նաև գրունտային ջրեր: Նրանք պատկանում են ալյուվիալ-դելյուվիալ, պրոլյուվիալ նստվածքներին և սնվում են մակերևութային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Գրունտային ջրերը առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ-մայիս ամիսներին, իսկ նվազագույնի՝ օգոստոս- նոյեմբեր ամիսներին:

Տարածաշրջանի գլխավոր ջրային երակը հանդիսանում է Սելավ-Մաստարա գետը, որն ունի սեզոնային բնույթ և բացառապես սնվում է հալոցքային և անձրևային ջրերով: Գետը գործում է միայն ինտենսիվ ձնհալերի և վարար տեղումների ժամանակ: Այն սկիզբ է առնում Արագած լեռան հարավ-արևմտյան լանջից, դուրս է գալիս Արարատյան հարթավայր և թափվում է Սև-Ջուր գետը:

Սելավ-Մաստարա գետն են թափվում բազմաթիվ՝ Բազմաբերդի, Թալիշ-Շամիրամի և այլ վտակներ: Նրանք նույնպես ցուցաբերում են խիստ սեզոնային բնույթ:

2.1. Տարածաշրջանի հողերի նկարագիրը

Տարածաշրջանի հողային ծածկույթն իրենից ներկայացնում է ՀՀ տարածքի տարբեր մասերում հանդիպող տարաբնույթ հողածածկեր: Տարածաշրջանի ցածրադիր մասում տարածված են կիսաանապատային հողերը, որոնք տարածաշրջանում կազմում են աննշան տոկոս:

Նախալեռնային շրջաններում լայնորեն տարածված են խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը: Տարածաշրջանը ծածկված է ջրաբերուկային-մարգագետնային՝ հնումոռոզվող հողերով, անտառային բուսականությունը՝ բնահողային ծածկույթին համապատասխան, նույնպես ենթարկված է ուղղահայաց գոտևորման: Առավել ցածրադիր տեղերում, Արաքսի և նրավտակների փուխր բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են բաց գորշագույն և

գորշագույն հողերը, որոնք հիմնականում կուլտուրականացված են ևտոռզվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Վերջին տասնամյակներին իրականացվել են աղուտային հողերի աղագրկման և կուլտուրականացման աշխատանքներ:

Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալած հողեր՝ ալկալահողերը:

Տեղ-տեղ երևում են թաքիրներ՝ դեղնա-սպիտակավուն կավի ճաքճքած մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի պայմաններում գերակշռում են ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝ պայմանավորելով քայքայված փուխր նյութերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

3.4 Կլիման

Վախարշապատ քաղաքը գտնվում է մարզկենտրոն Արմավիր քաղաքից 25կմ, իսկ Երևանից 16-17կմ հեռավորության վրա: Հեռավորությունը երկաթուղուց (Էջմիածին կայարան) 15 կմ է, ճանապարհային հատումների հանգույցները հանդիսանում են Երևան-Արմավիր-Գյումրի, Աշտարակ-Մարգարա միջպետական նշանակության մայրուղիների և տեղական նշանակության ավտոճանապարհների հատումները: Էջմիածին քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 800-850մ նիշերի վրա: Տարածաշրջանին բնորոշ է խիստ մայրցամաքային կլիման՝ ջերմաստիճանի և օդի խոնավության տատանումներով: Քաղաքի կլիման բնութագրվում է ցուրտ ձմեռով և շոգ ամառով: Տարվա ամենացուրտ ամիսը հունվարն է՝ բացարձակ նվազագույնը -31°C , ամենատաքը՝ առավելագույնը հուլիս-օգոստոսը $+41^{\circ}\text{C}$: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը $+11.7^{\circ}\text{C}$, իսկ տարեկան միջին տեղումները կազմում են 260մմ:

Տարածաշրջանում օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը կազմում է 62% (ամենացուրտ ամսվա համար): Իսկ ամենաշոգ ամսվա համար կազմում է 29%:

«Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ II-7.01-2011 շինարարական նորմերի համաձայն՝ Արմավիրի տարածաշրջանում օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները ներկայացված են ստորև.

Օդի միջին ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 2.1.

| Օդի ջերմաստիճանը | | | | | | | | | | | | | | Աղյուսակ 1. | | |
|---|----------------------------------|-------------------------------------|---------|------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|-------------------|-------------------------|---------------------------|
| Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը | Բարձրությունը ծովի մակարդակից, մ | Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C | | | | | | | | | | | | Միջին տարեկան, °C | Բացարձակ նվազագույն, °C | Բացարձակ առավելագույն, °C |
| | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| Արմավիր | 870 | -4.2 | -1.6 | 4.9 | 12.4 | 17.4 | 21.6 | 25.7 | 25.1 | 20.0 | 12.9 | 5.7 | -0.9 | 11.6 | -31 | 41 |
| Էջմիածին | 853 | -3,7 | -1,2 | 5,1 | 12,2 | 17,1 | 21,2 | 25,2 | 25,1 | 20,1 | 13,0 | 6,1 | -0,4 | 11,7 | -31 | 41 |

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 2.2.

| Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը, % | | | | | | | | | | | | | | | |
|---|----------------------------------|---------|------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|---------------------|------------------|--------------------------|--|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | | Միջին տարեկան, % | Միջին ամսական ժամը 15-ին | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | ամենացուրտ ամսվա, % | | ամենաշոգ ամսվա, % | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | |
| Արմավիր | 76 | 72 | 62 | 56 | 57 | 51 | 48 | 49 | 53 | 65 | 74 | 78 | 62 | 62 | 29 | |

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 2.3.

| Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը | Տեղումների քանակը — միջին ամսական, մմ | | | | | | | | | | | | | Ձնածածկույթ | | | |
|---|---------------------------------------|---------|------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|-----|-------------|--|--------------------------------------|--------------------------------------|
| | օրական առավելագույն | | | | | | | | | | | | | տարեկան | Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, մմ | Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը | Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | |
| Արմավիր | 18 | 19 | 25 | 32 | 44 | 26 | 12 | 9 | 11 | 25 | 23 | 16 | 260 | 42 | 38 | 92 | |
| | 19 | 21 | 26 | 37 | 42 | 21 | 38 | 31 | 35 | 30 | 30 | 20 | 42 | | | | |
| Էջմիածին | 18 | 20 | 26 | 37 | 45 | 26 | 15 | 10 | 10 | 25 | 24 | 18 | 274 | 48 | 44 | - | |
| | 14 | 22 | 25 | 26 | 29 | 46 | 34 | 25 | 27 | 25 | 46 | 18 | 46 | | | | |

Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Աղյուսակ 2.4.

| Բնակավայրի, | Օդի ջերմաստիճանը, °C | | | | | | | | Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | | Մթնոլորտային տեղումները և գրունտի սառչման խորությունը | | Քամի | | | |
|-------------|---------------------------------------|-----|---------------------------------------|-----|----------------------------------|----------------------|---|--|---|-----|---|---------------------------|--|---|--|--|
| | ամենացուրտ օրվա, ապահովվածությունը, % | | ամենահինգօրյակի, ապահովվածությունը, % | | ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը | բացարձակ նվազագույնը | ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը | Միջին ջերմաստիճանը ժամանակաշրջանի միջին օրական ջերմաստիճանով՝ ոչ բարձր, °C | | | միջին ամսական | միջին ամսական, ժամը 15-ին | Սեղումները կը լոյսեմբեր-մարտ ամիսներին, մմ | տի սառչման առավելագույն խորությունը, սմ | կշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին | արագությունները առավելագույնը ըստ ուղղությունների, մ/վ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| Արմավիր | -23 | -22 | -21 | -19 | -4,6 | -31 | 9,9 | 77 | 144 | 159 | 76 | 62 | 101 | 70 | ՀսԱրմ | 2,8 |
| | | | | | | | | -2,8 | 0,4 | 1,2 | | | | | | |

Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Աղյուսակ 2.5.

| Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը | Օդի ջերմաստիճանը, °C | | | | | Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | | Մթնոլորտային տեղումները, մմ | | Քամի | |
|---|----------------------|------|------------------------|------------------------------------|---------------------------------------|---|---------------------------|---|---------------------------------------|---|--|
| | Ապահովվածությունը, % | | բացարձակ առավելագույնը | ամենատաք ամսվա միջին առավելագույնը | ամենատաք ամսվա միջին օրական տատանումը | միջին ամսական | միջին ամսական, ժամը 15-ին | Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին | Տեղումների օրական առավելագույն քանակը | Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին | Միջին արագությունները նվազագույնը ըստ ուղղությունների, հուլիսին, մ/վ |
| | 0,95 | 0,99 | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| Արմավիր | 32 | 34 | 41 | 33,2 | 15,5 | 48 | 29 | 159 | 42 | Արլ | 1,9 |

ՀՀ տարածքի բնակավայրերի ցանկը և տեղակայման բնութագրերը

Աղյուսակ 2.6

| N | Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը | Բարձրությունը ծովի մակարդակից, մ | Կլիմայական շրջան |
|----|---|----------------------------------|------------------|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. | Արմավիր | 870 | S |
| 2. | Էջմիածին | 853 | S |

Քամու բնութագիրը

Աղյուսակ 2.7.

| Բնակավայրի, օրերևութաբանականկայանի անվանումը | Միջին տարեկան մթնոլորտա-յին ճնշումը, (հրճա) | Ամիսներ | Կրկնեփուռումը, % ըստ ուղղությունների | | | | | | | | Միջին տարեկան արագությունը, մ/վ | Միջին տարեկան արագությունը, մ/վ | Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը | Հաշվարկային արագությունը, մ/վ որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում | | | |
|--|---|---------|--------------------------------------|-------------------------|----------------|-----------------------|----------------|-----------------------|----------------|-------------------------|---------------------------------|---------------------------------|---------------------------------------|---|----|-----|----|
| | | | Միջին արագությունը, մ/վ | | | | | | | | | | | 25 | 50 | 100 | |
| | | | Հյուսիսային (Հս) | Հյուսիսարևելյան (ՀսԱրլ) | Արևելյան (Արլ) | Հարավարևելյան (ՀվԱրլ) | Հարավային (Հվ) | Հարավարևմտյան (ՀվԱրմ) | Արևմտյան (Արմ) | Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ) | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| Արմավիր | 917,0 | | | | | | | | | | | | | | | | |
| | հունվար | 7 | 5 | 17 | 8 | 9 | 8 | 28 | 18 | 77 | 0,5 | 0,9 | 12 | 20 | 23 | 24 | 77 |
| | | 2,2 | 2,2 | 1,9 | 1,9 | 1,8 | 2,3 | 2,5 | 2,8 | | | | | | | | |
| | ապրիլ | 5 | 7 | 28 | 11 | 9 | 9 | 20 | 11 | 52 | 1,3 | | | | | | |
| | | 2,8 | 3,4 | 2,5 | 2,7 | 2,7 | 3,7 | 3,0 | 3,7 | | | | | | | | |
| | հուլիս | 3 | 8 | 31 | 16 | 11 | 7 | 16 | 8 | 55 | 1,1 | | | | | | |
| | | 2,1 | 2,5 | 1,9 | 2,2 | 1,1 | 2,6 | 2,7 | 2,6 | | | | | | | | |
| | հոկտեմբեր | 5 | 4 | 23 | 16 | 9 | 7 | 22 | 14 | 72 | 0,6 | | | | | | |
| | | 2,2 | 2,8 | 1,9 | 2,9 | 2,8 | 3,6 | 3,1 | 3,8 | | | | | | | | |

3.5 Օդային ավազան

Տարածաշրջանի օդային ավազանի աղտոտման հիմնական աղբյուրներն են՝ ՀԱԷԿ-ը, Զվարթնոց օդանավակայանը, հանքավայրերի շահագործումը (երբեմն տեղացող «կարմիր» անձրևների տեսքով), տարեցտարի ավելացող ավտոտրանսպորտը և աղքատությամբ պայմանավորված ամեն տեսակի կոշտ վառելիքի այրումը:

Արմավիրի մարզում 1 բնակչի հաշվով մթնոլորտային տեսակարար արտանետումները 2015թ. կազմում է 12.7կգ, որը Արարատի մարզի համեմատաբար է 11.4%-ով, 1 քառ. կմ-ի հաշվով մարզի ցուցանիշը ևս բարձր է Արարատի մարզի ցուցանիշից՝ 92.9%-ով:

Մթնոլորտի աղտոտվածության կանխարգելման նպատակով մարզի տարածքում տարեցտարի ընդարձակվում են կանաչապատ տարածքները՝ վերջին տաս տարիների ընթացքում մարզի համայնքների կանաչապատման ենթակա հողատարածքներում տնկվել են ավելի քան 137 հազար ծառերի ու թփերի տնկիներ ու արմատակալներ:

Վախարշապատ համայնքի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները որոշվում են ըստ հետևյալ աղյուսակի՝ ելնելով տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից /ՀՀ կառավարության 2012 թվականի N-1673 -Ս որոշմամբ հաստատված ուղեցույց/:

| Բնակչության քանակը (հազ.) | Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ³) | | | |
|---------------------------|---|---------------|----------------|---------------|
| | Փոշի | Ծմբի երկօքսիդ | Ազոտի երկօքսիդ | Ածխածնի օքսիդ |
| 50 -125 | 0,4 | 0,05 | 0,03 | 1,5 |
| 10 - 50 | 0,3 | 0,05 | 0,015 | 0,8 |
| < 10 | 0,2 | 0,02 | 0,008 | 0,4 |

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

3.6 Ջրային ռեսուրսներ

Վերջին տարիների կլիմայի փոփոխության և մարզի տարածքում ստորգետնյա ջրային պաշարների անխոհեմ ու ոչ արդյունավետ օգտագործման, տեղումների պակասի հետևանքով, լուրջ փոփոխություններ են կատարվել ջրային պաշարների տեղակայման, հոսքերի բնագավառներում: Հիմնախնդիրներն են՝ խորքային հորերի անխնա շահագործման հետևանքով խորքային մաքուր ջրերի մակարդակի ցածրացումը, գյուղական համայնքների կոյուղագծերի բացակայության պատճառով կենցաղային թափոնների արտահոսքը Մև ջուր գետը, կեղտաջրերի մաքրման կայանների բացակայությունը, Արմավիր քաղաքում ռոռգման համակարգի բացակայության պատճառով քաղաքի աստիճանական անապատացումը:

Գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են ոչ բարվոք վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը ստանդարտներին համապատասխան որակյալ ջրամատակարարման հարցում: Գլխամասային կառույցները չունեն սանիտարական պահպանման գոտիներ, բնակչությանը տրվող ջուրը հիմնականում չի վարակազերծվում: Կեղտաջրերի կառավարման ենթակառուցվածքները գտնվում են անբավարար վիճակում: Կոյուղու համակարգ ունեն Արմավիր, Էջմիածին, Մեծամոր քաղաքները և որոշ գյուղական համայնքներ: Արմավիրի մարզում 2015թ. կոյուղի բաց թողնված կեղտաջրերի հեռացման ծավալը 2013թ-ի համեմատ նվազել է 64.1%-ով, Արարատի մարզում՝ ավելացում 1.8%-ով, իսկ ՀՀ-ում նկատվում է ցուցանիշի նվազեցում՝ 13.5%-ով:

3.7 Բուսական աշխարհ

Մարզի տարածքը գտնվում է Երևանի և Արագածի ֆլորիստիկ շրջաններում, որոնց համար տիպիկ են Հայաստանի ֆլորայի 170-ից ավելի հազվագյուտ և անհետացող և 50-ից ավելի էնդիմիկ տեսակներ: Գերակշռում են կիսաանապատային չորասեր բուսատեսակները, իսկ ցածրադիր, ճահճապատ տարածություններում՝ եղեգնի մացառուտները: Տարածաշրջանում գրանցված են մոտ 130 բուսատեսակ, որոնցից որպես դոմինանտ կարելի է նշել հովվափողազգիներից (*Alismataceae*)՝ հովվափող լանցետային (*Alisma lanceolatum*), սովորական նետախոտը (*Sagittaria sagittifolia* L.), եռատերև նետախոտը (*Sagittaria trifolia* L.), հովանոցազգիներից՝ ակտոնոլեմ խոշորաբաժակը (*Actinolema macrolema*), աննշմարակող անհարթապտուղը (*Aphanopleura trachisperma*), երնջակ Վանատուրի (*Eringium vanaturii*), աստղածաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (*Amberboa moschata*), խոզանափուշ բարակը (*Caucinia tenella*), կանգար տուրնեֆորի (*Gundelia tournefortii*), կաթնուկ Թախտաջյանի (*Lactuca takhtadzhianii*), խաչածաղկավորներից՝ լրջուն թռչնակտուց (*Isatis ornitorhynchus*), ցախակեռասազգիներից՝ կտտենի, թանթրվենի Տիգրանի (*Sambucus tigranii*), մեխակազգիներից՝ փշատերևուկ ծակող (*Acanthophyllum pungens*), ալոխրուլա բունգեի

(*Allochrysa bungei*), մեխակ Լիբանանի (*Dianthus libanotis*), թելուկազգիներից՝ բիեներցիա շուրջաթև (*Bienertia cycloptera*), օշան Թամամշյանի (*Salsola tamamschjanae*), սպանախ քառակեզ (*Spinacia tetrandra*), լոբազգիներից՝ գազ տարօրինակ (*Astragalus paradoxus*), հացհամեմ գլխիկավոր (*Trigonella capitata*), ֆրանկենազգիներից՝ ֆրանկենիա փոշապատ (*Frankenia pulverulenta*), բորակաթուփազգիներից՝ բորակաթուփ շոբերի (*Nitraria schoberi*), հացազգիներից՝ այծակն հաստ (*Aegilops crassa*), ցորեն արարատյան (*Tritium araraicum*), կարմրանազգիներից՝ կարմրան (*Tamarix*), կարմրան ութառեզանի (*Tamarix octandra*), զուգատերևազգիներից՝ տետրադիկլիս բարալիկ (*Tetradiclis tanella*) և այլն:

Հայաստանի բույսերի կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող տեսակներից մարզի տարածաշրջանում հանդիպում են ադուտների և կիսաանապատային բուսականության հետևյալ ներկայացուցիչները, մասնակիորեն՝ ինկեղեզ ճահճային (*Acorus calamus* L.), Շտերնբերգիա շնդեղածաղկային (*Sternbergia colchiciflora* Waldst. et Kit), Ակտինոլեմ խոշաբաժակ (*Actinolema macrolema* Boiss), Երնջակ Վանատուրի (*Eryngium wanaturii* Woronow), Վարդաստերեփուկ Իլլինի (*Amberboa iljiniana* Grossh) և այլն:



Նկար 5. Շտերնբերգիա շնդեղածաղկային



Նկար 6. Ակտինոլեմ խոշաբաժակ

Քաղաքի տարածքում բուսականությունը ներկայացված է քաղաքային բարեկարգման մաս կազմող արհեստականորեն հիմնած ծառերով և թփերով, ինչպես նաև անհատական տնամերձ հողակտորներում՝ պտղատու ու խաղողի այգիներով և բանջարաբուստանային կուլտուրաներով:

3.8 Կենդանական աշխարհ

Տարածաշրջանում հանդիպում են ողնաշարավոր, հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Տարածաշրջանում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ, որոնցից 28 տեսակը կաթնասուն է, 67-ը՝ թռչուն, 15-ը՝ սողուն և 3-ը՝ երկկենցաղ: Տարածաշրջանում դոմինանտ և բնորոշ տեսակներից են Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես ս), *Cricetus*

auratus Nat. (գերմանամուկ), *Mucrotus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L.(կաքավ), *Grus grus* L. (կռունկ) և այլն: Տարածաշրջանին բնորոշ ողնաշարավոր տարածքված կենդանիներից են՝ գայլը, աքիսը, եղեգնակատուն, ջրասամույրը, աղվեսը, կոնչան բադը, ճահճակուղբը, լճագորտը, մոխրագույն առնետը ժայռային մողեսը, սողուններից՝ սովորական լորտուն և միջատները: Անողնաշարավոր կենդանիներից հանդիպում են ծովախեցգետինը, մրջյունը, մեղուն, ճռիկը, մորեխը, կաղամբաթիթեռը և այլն:

Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով՝ տնային ճնճուկը, մոխրագույն ագռավը, կաչաղակը և այլն: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանիներից է՝ հայկական որորը (*Larus armeniacus* But.), հազվադեպ հանդիպող Արարատյան որդան կարմիրը (*Porphyrophora hamnielii* Brandt), Մեղու Դեսպտորիա (*Megachile deseptoria* Peres):

Տարածաշրջանում հանդիպող ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանիների տեսակներից հանդիպում են, մասնակիորեն՝ հարավային պայտաքիթը (*Rhinolophus euryales*), վարդագույն հավալուսն (*Pelecanus onocrotalus*), քաջահավ (*Plagadis falcinellus* Linneaus), փոքր ձկնկուլ (*Phalacrocorax pygmaeus* Linneaus), Ուբադշի ճպուռ (*Gomphus ubadschii* Schmidt), Սատունինի սկոտոդրիմադուզա (*Scotodrymadusa satunini*), Հայկական բնդեռնիկ (*Glaphyrus calvaster* Zaitzev), Սև անգղ (*Aegipus monachus*), Տափաստանային մկնաճուռակ (*Circus macrourus*), Տափաստանային մկնաճուռակ (*Glareola nordmanni*), Սատունինի սկոտոդրիմադուզա (*Scotodrymadusa satunini*) և այլն:

Քաղաքում չկան մարզի համար տիպիկ հազվագյուտ կամ էնդեմիկ վայրի բնության, ինչպես նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում ներառված բուսատեսակներ և կենդանատեսակներ:

Նախատեսվող գործունեությունը նոր տարածքներ չի պահանջում, ուստի բուսական և կենդանական աշխարհի վրա որևէ ազդեցություն չի ունենալու:

Բնության հատուկ պահպանվող, ինչպես նաև էկոլոգիական տեսակետից զգայուն տարածքները բացակայում են:

3.9 Մշակույթի և բնության հուշարձաններ

Վաղարշապատ քաղաքը հարուստ է եկեղեցական համալիրներով, բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններով, թանգարաններով: Քաղաքում առկա են 4-10-րդ դարերում կառուցված 7 վանքային համալիրներ, գործում են 5 եկեղեցի, որոնցից գլխավորը՝ Էջմիածնի Մայր Տաճարն է: Նշված եկեղեցիներն են.

- Մայր աթոռ սուրբ Էջմիածին
- Զվարթնոց տաճար 31
- Սուրբ Հռիփսիմե
- Սուրբ Գայանե /Նկար 8./
- Սուրբ Շողակաթ
- Սուրբ Մարիամ Աստվածածին

| | | | | |
|-----------|-----------|-------------|-----------------|-------------------|
| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ/նշան. | հավելյալ նշումներ |
|-----------|-----------|-------------|-----------------|-------------------|

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---------------|--|----------------------------|-------|---|
| Բնակելի տուն | 19 դ. վերջ | Աբովյան - Մովսես Խորենացի փ. խաչմերուկ | 4.2/1 | S | |
| Բնակելի տուն | 20 դ. I կես | Ալավերդյան փ., 8 | 4.2/2 | S | |
| Բնակելի տուն | 1947 թ. | Բաղրամյան փ., 37 | 4.2/3 | S | |
| Բնակելի տուն | 19 դ. I կես | Իսի Լե Մուլինո փ. 46 | 4.2/4 | S | ծառայել է որպես Սբ. Գայանե եկեղեցու միաբանության տնտեսական շենք |
| Բնակելի տուն | 1950-ական թթ. | Մեսրոպ Մաշտոց փ., 79 | 4.2/5 | S | |
| Բնակելի տուն | 20 դ. սկիզբ | Շահումյան փ., 10 | 4.2/6 | S | |
| Բնակելի տուն | 20 դ. սկիզբ | Շահումյան փ., 12, 14 | 4.2/7 | S | |
| Բնակելի տուն | 20 դ. սկիզբ | Շահումյան փ., 16 | 4.2/8 | S | |
| Բնակելի տուն | 1880-ական թթ. | Շահումյան փ., 18 | 4.2/9 | S | |
| Բնակելի տուն | 20 դ. սկիզբ | Շահումյան փ., 21 | 4.2/10 | S | |
| Բնակելի տուն | 1914 թ. | Շահումյան փ., 51 | 4.2/11 | S | |
| Գերեզմանոց՝ Էջմիածնի միաբանության | 17-20 դդ. | ք. մ. | 4.2/12 | Հ | Մայր տաճարից Սբ. Գայանե եկեղեցի տանող ճանապարհի ձախ կողմում |
| Գերեզման Առաքել Դավրիժեցու | 1670 թ. | | 4.2/12.1 | Հ | |
| Գերեզման Մուրադ ճարտարապետի | 1656 թ. | | 4.2/12.2 | Հ | |
| Եկեղեցի | 5 դ. կես | | 4.2/13.1 | Հ | |
| Եկեղեցի Սբ. Գրիգոր Լուսավորիչ | 643-662 թթ. | | 4.2/13.2 | Հ | պատվիրատու՝ Ներսես Գ Տայեցի կաթողիկոս |
| Բաղնիք | 7 դ. կես | | 4.2/13.3 | Հ | |
| Պալատ կաթողիկոսական | 652-662 թթ. | | 4.2/13.4 | Հ | |
| Գահասրահ | 652-662 թթ. | | 4.2/13.4.1 | Հ | |
| Թանգարանի շենք. Զվարթնոցի թանգարանի շենքը | 1937 թ. | | 4.2/13.5 | Հ | վրկնգ.՝ 1981 թ. |
| Հուշարձան՝ Թորոս Թորամանյանի | 1985 թ. | | 4.2/13.6 | Հ | քանդ.՝ Ա. Անդրեասյան |
| Կոթող | մ.թ.ա. 7 դ. | | 4.2/13.7 | Հ | թանգարանի |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|---|----------------|--|------------------------------|-------|--|
| | | | | | մուտքի մոտ, Ռուսա II -ի սեպագիր արձանագրությամբ |
| Հնձան | 7 դ. | | 4.2/13.8 | Հ | |
| Մեղանատուն | 7 դ. | | 4.2/13.9 | Հ | |
| Զրհոր | 4-5 դդ. | | 4.2/13.10 | Հ | |
| Պարիսպ | 7 դ. | | 4.2/13.11 | Հ | համալիրի ամ կողմում |
| Եկեղեցական համալիր «Մայր Աթոռ Սբ. Էջմիածին» | 303 թ. - 20 դ. | Մովսես Խորենացի - Արարատյան փ. խաչմերուկ | 4.2/14 | Հ | խաչմերուկից 200 մ հվ-ամ |
| Եկեղեցի «Մայր տաճար» | 4-17 դդ. | | 4.2/14.1 | Հ | |
| Զանգակատուն | 1653-1658 թթ. | | 4.2/14.1.1 | Հ | |
| Գանձարան | 1869 թ. | | 4.2/14.1.2 | Հ | |
| Խաչքար տեր Ստեփանոսի | 1304 թ. | | 4.2/14.1.2.1 | Հ | գանձարանում, կոտրտված, խիստ հողմնահար, բերված՝ Նորավանքից կազմող՝ Մումիկ |
| Խաչքար | 9 դ. | | 4.2/14.1.3 | Հ | բակում, կանգնեցված քարաբեկորին |
| Խաչքար | 9 դ. | | 4.2/14.1.4 | Հ | բակում, կանգնեցված բազալտե պատվանդանին, բերված՝ Մաքենիսից, վերին ձախ անկյունը՝ կոտրված |
| Խաչքար՝ Դեղոյնի | 1148 թ. | | 4.2/14.1.5 | Հ | բակում, բերված՝ Գլաձորից |
| Խաչքար | 1171 թ. | | 4.2/14.1.6 | Հ | թևավոր խաչ, բեկորները՝ բերված Հովհաննավանքից, հավաքված և ամրացված՝ 1977 թ. |
| Խաչքար՝ Խաչատուր Անհաղթ փիլիսոփայի | 1218 թ. | | 4.2/14.1.7 | Հ | բակում, բերված Գլաձորից |
| Խաչքար՝ Գրիգոր Խաղբակյանի | 1233 թ. | | 4.2/14.1.8 | Հ | բակում, բարձր պատվանդանին, |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|---|-----------|-------------|-----------------------------|-------|---|
| | | | | | բերված՝ Իմիրզեկ հնավայրից |
| Խաչքար՝ Գրիգոր և Մամբան Մամիկոնյանների («Ամենավրկիչ») | 1273 թ. | | 4.2/14.1.9 | Հ | բակում, բարձր պատվանդանին, երկատված, բերված՝ Ջղին-գյուլ հնավայրից |
| Խաչքար | 1287 թ. | | 4.2/14.1.10 | Հ | բակում, արձանագիր պատվանդանին, բերված՝ Աղջոց վանքից |
| Խաչքար՝ Թամթոյի | 1297 թ. | | 4.2/14.1.11 | Հ | բակում, պատվանդանին, բերված՝ Վարդենիսի ենթատարածքի Ակունք գյուղի «Գումեր» գյուղատեղիից |
| Խաչքար | 13 դ. | | 4.2/14.1.12 | Հ | բակում, կանգնեցված բազալտե պատվանդանին, բերված՝ Գեղարդից, քիվի դիմային մակերեսը՝ տաշված |
| Խաչքար | 13 դ. | | 4.2/14.1.13 | Հ | բակում, կանգնեցված բազալտե պատվանդանին, քիվի վերնամասն արձանագիր, վերին անկյունները կտտրված |
| Խաչքար | 13 դ. | | 4.2/14.1.14 | Հ | բակում, դիրքը՝ հորիզոնական |
| Խաչքար՝ Ներսեսի և Տիրացի | 13 դ. | | 4.2/14.1.15 | Հ | բակում, կանգնեցված բազալտե պատվանդանին, բերված՝ Գեղարդից |
| Խաչքար | 13 դ. | | 4.2/14.1.16 | Հ | բակում, կանգնեցված բազալտե պատվանդանին, |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|--|-----------|-------------|-----------------------------|-------|--|
| | | | | | բերված՝ Գեղարդից |
| Խաչքար | 14 դ. | | 4.2/14.1.17 | Հ | բակում, կանգնեցված մեծ քարաբեկորին, երկատված, վերին ձախ անկյունը կոտրված |
| Խաչքար՝ Ասիլի | 1451 թ. | | 4.2/14.1.18 | Հ | բակում, բերված՝ Մաքենյաց վանքից |
| Խաչքար՝ Սառայի | 1451 թ. | | 4.2/14.1.19 | Հ | ազուցված մկրտարանի պատին |
| Խաչքար՝ Մարջանի և Ալեքսանի | 1495 թ. | | 4.2/14.1.20 | Հ | ազուցված մկրտարանի պատին |
| Խաչքար՝ Խաթունի | 15 դ. | | 4.2/14.1.21 | Հ | ազուցված մկրտարանի պատին |
| Խաչքար՝ Վարդանի և Արևի | 1543 թ. | | 4.2/14.1.22 | Հ | բակում, բարձր պատվանդանին, բերված՝ Վարդենիսի ենթատարածքի Ակունք գյուղի «Գոմեր» գյուղատեղիից՝ 1975 թ. |
| Խաչքար | 1569 թ. | | 4.2/14.1.23 | Հ | բակում, եռաստիճան պատվանդանին, բերված՝ Վարդենիսի ենթատարածքի Լճավան գյուղի «Գթաշեն» գյուղատեղիի գերեզմանոցից |
| Խաչքար՝ Մուլթանդուլի | 16 դ. | | 4.2/14.1.24 | Հ | բակում, կանգնեցված բազալտե պատվանդանին, բերված՝ Վարդենիսի ենթաշրջանի Գթաշեն գյուղատեղիից |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|--|-----------|-------------|-----------------------------|-------|--|
| Խաչքար | 16 դ. | | 4.2/14.1.25 | Հ | բակում, կանգնեցված բազալտե պատվանդանին, բերված՝ Մաքենյաց վանքից, արձանագիր |
| Խաչքար՝ Հակոբի | 1601 թ. | | 4.2/14.1.26 | Հ | բակում, կանգնեցված պատվանդանին, բերված՝ Հին Ջուղայից |
| Խաչքար՝ Զաքարի, ծնողների և Ամիրի | 1602 թ. | | 4.2/14.1.27 | Հ | բակում, կանգնեցված պատվանդանին, բերված՝ Հին Ջուղայից |
| Խաչքար՝ Ստեփանոսի | 1602 թ. | | 4.2/14.1.28 | Հ | բակում, կանգնեցված պատվանդանին, բերված՝ Հին Ջուղայից |
| Խաչքար՝ պարոն Հովհաննեսի | 1602 թ. | | 4.2/14.1.29 | Հ | բակում, կանգնեցված պատվանդանին, բերված՝ Հին Ջուղայից, կազմող՝ Գրիգոր |
| Խաչքար՝ Խերիտրի | 1602 թ. | | 4.2/14.1.30 | Հ | բակում, կանգնեցված պատվանդանին, բերված՝ Հին Ջուղայից |
| Խաչքար՝ Մուլթանի, Ավետիքի և Բուրթելի | 1603 թ. | | 4.2/14.1.31 | Հ | բակում, կանգնեցված պատվանդանին, բերված՝ Հին Ջուղայից |
| Խաչքար | 1639 թ. | | 4.2/14.1.32 | Հ | թևավոր խաչ բակում, բերված՝ Արցախի Խամշի վանքից |
| Խաչքար՝ Սարգսի | 1745 թ. | | 4.2/14.1.33 | Հ | բակում, կանգնեցված պատվանդանին, բերված՝ Նորադուզի |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|--|----------------|-------------|-------------------------------|-------|--|
| | | | | | պատմական գերեզմանոցից, կազմող՝ Ներսես |
| Խաչքար՝ Մեծ եղեռնի 50-ամյակին | 1965 թ. | | 4.2/14.1.34 | S | կաթողիկոսարանի բակում, տաճարից հս, ճարտ.՝ Ռ. Իսրայելյան |
| Խաչքար՝ Տ.Տ. Վազգեն Ա կաթողիկոսի 20-ամյա հայրապետությանը | 1976 թ. | | 4.2/14.1.35 | S | Վեհարանի մոտ, ճարտ.՝ Ռ. Իսրայելյան |
| Կոթող | մ.թ.ա. 8-7 դդ. | | 4.2/14.1.36 | Հ | տաճարից 20 մ հս, ամրացված պատվանդանին՝ 1964 թ. |
| Կոթող | 1603 թ. | | 4.2/14.1.37 | Հ | բակում, ճեմարանի մոտ, կազմող՝ Զոհրապ |
| Հուշաղբյուր՝ Խրիմյան Հայրիկին | 1982 թ. | | 4.2/14.1.38 | S | քանդ.՝ Գետիկ Բաղդասարյան, ճարտ.՝ Յու. Թամանյան, պատվիատու՝ վանեցի Միհրան և Սեդա Բարուխանյաններ |
| Հուշաղբյուր «Կաթնաղբյուր» | 1967 թ. | | 4.2/14.1.39 | S | տաճարի գլխ. մուտքից ձախ, պատվիրատու՝ ամերիկահայ Ս. Տեր-Գրիգորյան |
| Խաչքար | 13 դ. | | 4.2/14.1.39.1 | Հ | կանգնեցված հուշաղբյուրի կիսակամարում |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Դանիել Ա Պայազատեցու | 1808 թ. | | 4.2/14.1.40 | Հ | Մայր տաճարի ամ մուտքի մոտ |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհաննես Ը Կարբեցու | 1842 թ. | | 4.2/14.1.41 | Հ | Մայր տաճարի ամ մուտքի մոտ |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցու | 1857 թ. | | 4.2/14.1.42 | Հ | Մայր տաճարի ամ մուտքի մոտ |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---------------|-------------|-----------------------------|-------|---|
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու | 1882 թ. | | 4.2/14.1.43 | Հ | Մայր տաճարի հվ մուտքի մոտ |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Մակար Ա-ի | 1891 թ. | | 4.2/14.1.44 | Հ | Մայր տաճարի ամ մուտքի մոտ |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի (Խրիմյան Հայրիկ) | 1907 թ. | | 4.2/14.1.45 | Հ | Մայր տաճարի ամ մուտքի մոտ |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Մաթևոս Բ Կոստանդնուպոլսեցու | 1910 թ. | | 4.2/14.1.46 | Հ | Մայր տաճարի ամ մուտքի մոտ |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Տփիսիսեցու | 1930 թ. | | 4.2/14.1.47 | Հ | Մայր տաճարի ամ մուտքի մոտ |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ի | 1954 թ. | | 4.2/14.1.48 | Հ | Մայր տաճարի ամ մուտքի մոտ |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի | 1994 թ. | | 4.2/14.1.49 | | Մայր տաճարի ամ մուտքից աջ |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի | 1999 թ. | | 4.2/14.1.50 | | Մայր տաճարի ամ մուտքից աջ |
| Բնակելի շենք վանականների («Երեմյան խցեր») | 1894 թ. | | 4.2/14.2 | Հ | տաճարից 80 մ աե |
| Հյուրանոց «Ղազարապատ» | 18 դ. I կես | | 4.2/14.3 | Հ | Մայր տաճարից 100 մ հվ-աե |
| Մատենադարանի շենք | 1903 թ. | | 4.2/14.4 | Հ | Մայր տաճարից 100 մ հս-աե |
| Սեղանատուն | 17 դ. I կես | | 4.2/14.5 | Հ | Մայր տաճարից 35 մ հվ |
| Վեհարան | 1738-1741 թթ. | | 4.2/14.6 | Հ | հին վեհարան, Մայր տաճարից 50 մ հվ-ամ |
| Խաչքար | 13 դ. | | 4.2/14.6.1 | Հ | բերված՝ Գոռիչի վանքից |
| Խաչքար՝ Աթաբեկ Տարսայիճի, Բուրթելի և Բուղտայի | 1308 թ. | | 4.2/14.6.2 | Հ | Վեհարանի ներսում, բերված՝ Նորավանքից կազմող՝ Մումիկ |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|--|------------|-----------------------------|----------------------------|-------|---|
| Խաչքար՝ Ուլուխանի | 1600 թ. | | 4.2/14.6.3 | Հ | ազուցված պատին, բերված՝ Նորադուզից, կազմող՝ Քիրամ |
| Վեհարան | 1910 թ. | | 4.2/14.7 | Հ | նոր վեհարան տաճարից 200 մ ամ |
| Տպարանի շենք | 1771 թ. | | 4.2/14.8 | Հ | Մայր տաճարից 80 մ հվ-աե |
| Հուշարձան «Տրդատադուռ» | 17 դ. | | 4.2/14.9 | Հ | Մայր տաճարից 35 մ ամ |
| Լիճ Ներսիսյան | 1846 թ. | | 4.2/14.10 | Հ | Մայր տաճարից 220 մ հվ-ամ |
| Հիվանդանոցի շենք | 19 դ. վերջ | | 4.2/14.11 | Հ | Մայր տաճարից 200 մ հվ |
| Եկեղեցի Սբ. Աստվածածին | 1767 թ. | կենտրոնում (այսուհետև՝ կնտ) | 4.2/15 | Հ | Մայր տաճարից 360 մ հս |
| Զանգակատուն | 1767 թ. | | 4.2/15.1 | Հ | վրկնգ՝ 1983 թ. ճարտ. Թ. Գևորգյան |
| Խաչքար | 12 դ. | | 4.2/15.2 | Հ | ազուցված՝ հս պատին |
| Խաչքար | 1472 թ. | | 4.2/15.3 | Հ | ազուցված՝ ամ պատին, կազմող՝ Դավիթ |
| Խաչքար | 16 դ. | | 4.2/15.4 | Հ | ազուցված՝ հվ պատին |
| Խաչքար | 16 դ. | | 4.2/15.5 | | ազուցված՝ հս պատին, կազմող՝ Մելիքսեթ |
| Խաչքար՝ Շիրվանի, Մարինեի և Ուլուբեկի | 1581 թ. | | 4.2/15.6 | Հ | ազուցված՝ ամ պատին |
| Խաչքար | 1596 թ. | | 4.2/15.7 | Հ | ազուցված՝ հս պատին |
| Խաչքար | 1655 թ. | | 4.2/15.8 | Հ | ազուցված՝ ամ պատին, կազմող՝ Դավիթ |
| Խաչքար | 10 դ. | | 4.2/16.1 | Հ | ազուցված՝ ամ ճակատին, արտաքուստ |
| Խաչքար | 10 դ. | | 4.2/16.2 | Հ | ազուցված՝ ամ ճակատին, արտաքուստ |
| Խաչքար | 10-11 դդ. | | 4.2/16.3 | Հ | հվ-աե կողմում, իրար կողքի |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|------------------|-----------|-------------|----------------------------|-------|--|
| | | | | | կանգնեցված 3 խաչքարերից կենտրոնինը, քիվը՝ արձանագիր |
| Խաչքար | 10-11 դդ. | | 4.2/16.4 | Հ | հվ-աե կողմում, իրար կողքի կանգնեցված 3 խաչքարերից ձախից 1-ինը |
| Խաչքար | 12-13 դդ. | | 4.2/16.5 | Հ | եկեղեցու հվ պատի մոտ, ներքուստ, ձախ եզրը և վերին աջ անկյունը կտրտված |
| Խաչքար | 12-13 դդ. | | 4.2/16.6 | Հ | եկեղեցու հս-աե կողմում, ամրացված՝ պատվանդանին |
| Խաչքար | 15-16 դդ. | | 4.2/16.7 | Հ | եկեղեցու հվ պատի մոտ, ներքուստ, ձախ եզրը և վերին աջ անկյունը՝ կտրտված, արձանագիր |
| Խաչքար | 15-16 դդ. | | 4.2/16.8 | Հ | հվ-աե կողմում, իրար կողքի կանգնեցված 3 խաչքարերից ձախից 3-րդը |
| Գավիթ | 1688 թ. | | 4.2/16.9 | Հ | վրնրգ.՝ 1977 թ. |
| Խաչքար | 11-12 դդ. | | 4.2/16.9.1 | Հ | գավթի հս մույթի մոտ, պահպանվել է ստորին հատվածը |
| Խաչքար | 11-12 դդ. | | 4.2/16.9.2 | Հ | հենած գավթի պատին, երկատված, երկատված մասերը՝ միացված |
| Խաչքար | 12-13 դդ. | | 4.2/16.9.3 | Հ | ազուցված՝ գավթի հս պատին, որմնասյան աջ կողմում |
| Խաչքար | 1456 թ. | | 4.2/16.9.4 | Հ | հս պատին կազմող՝ Սարգիս |
| Խաչքար Հովհաննես | 15-16 դդ. | | 4.2/16.9.5 | Հ | ազուցված՝ գավթի |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|---|-----------|-------------|-----------------------------|-------|---|
| Շահգաստի | | | | | հվ պատին, ներքուստ |
| Խաչքար Սարգսի | 15-16 դդ. | | 4.2/16.9.6 | Հ | ագուցված՝ գավթի հվ պատին, ներքուստ |
| Խաչքար Մարգարի | 16 դ. | | 4.2/16.9.7 | Հ | հվ պատին, գույգ խաչքարերից ձախակողմյանն է, կազմող՝ քիրամ |
| Խաչքար Ավագ խաթունի | 1599 թ. | | 4.2/16.9.8 | Հ | հվ պատին, գույգ խաչքարերից աջակողմյանն է, կազմող՝ քիրամ |
| Խաչքար Ակոբի | 1642 թ. | | 4.2/16.9.9 | Հ | ամ պատին |
| Գերեզման վարդապետ Ներսեսի | 1651 թ. | | 4.2/16.9.10 | S | |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Եղիազար Ա Այնթափցու | 1691 թ. | | 4.2/16.9.11 | Հ | |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Աբրահամ Բ Սշեցու | 1734 թ. | | 4.2/16.9.12 | Հ | |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Ղազարի | 1750 թ. | | 4.2/16.9.13 | Հ | |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Մինաս Ա Ակնեցու | 1753 թ. | | 4.2/16.9.14 | Հ | |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Շամախեցու | 1762 թ. | | 4.2/16.9.15 | Հ | |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Միմեոն Ա Երևանցու | 1780 թ. | | 4.2/16.9.16 | Հ | |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու | 1799 թ. | | 4.2/16.9.17 | Հ | |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Հովսեփ Արղուրյանի | 1801 թ. | | 4.2/16.9.18 | Հ | |
| Գերեզման արքեպիսկոպոս Բարսեղի | 1812 թ. | | 4.2/16.9.19 | S | |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|--|---------------|-------------|-----------------------------|-------|---|
| Գերեզման Սողոմոն Հովսեփյանի | 1829 թ. | | 4.2/16.9.20 | S | |
| Գերեզման Ոսկի Էնակովյանցի | 1829 թ. | | 4.2/16.9.21 | S | |
| Գերեզման Թովմա Հովսեփյանց - Ղորղանյանցի | 1842 թ. | | 4.2/16.9.22 | S | |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Մաթեոս Ա Կոստանդնուպոլսեցու (Չուխաճյան) | 1865 թ. | | 4.2/16.9.23 | Հ | |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա-ի | 1938 թ. | | 4.2/16.9.24 | Հ | |
| Բնակելի տուն | 19 դ. | | 4.2/16.10 | S | Եկեղեցուց 30 մ հս-ան |
| Գերեզմանոց | 10-20 դդ. | | 4.2/16.11 | Հ | |
| Գերեզման Վարդան Խաչատուրի Աբովյանի | 1896 թ. | | 4.2/16.11.1 | Հ | Խաչատուր Աբովյանի որդին է |
| Գերեզման Սամսոն ՏԵՐ-Պողոսյանի (Խենթ) | 1912 թ. | | 4.2/16.11.2 | Հ | |
| Գերեզման Սմբատ Գրիգորի Բորոյանի (Սախլուտո) | 1956 թ. | | 4.2/16.11.3 | Հ | |
| Խաչքար | 10 դ. | | 4.2/16.11.4 | Հ | |
| Խաչքար | 10-11 դդ. | | 4.2/16.11.5 | Հ | |
| Խաչքար | 12-13 դդ. | | 4.2/16.11.6 | Հ | |
| Խաչքար | 14-16 դդ. | | 4.2/16.11.7 | Հ | կանգնեցված՝ դեղնավուն տուֆից պատրաստված պատվանդանին |
| Խաչքար | 15-16 դդ. | | 4.2/16.11.8 | Հ | |
| Գերեզմանոց | 19-20 դդ. | | 4.2/16.12 | Հ | Եկեղեցուց 80 մ ամ |
| Հուշաղբյուր՝ Աննիկ Դերձակյանի | 1960-ական թթ. | | 4.2/16.13 | S | ճարտ.՝ Ռ. Իսրայելյան |
| Հուշաղբյուր 1915 թ. Մեծ եղեռնի զոհ կարնոհայությանը | 1983 թ. | | 4.2/16.14 | S | ճարտ.՝ Ա. Գալիկյան |
| Միաբանության շենք | 1880-ական թթ. | | 4.2/16.15 | Հ | Եկեղեցուց 40 մ ամ վրնրգ.՝ 1987 թ. |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|---|---------------|-------------|-----------------------------|-------|---|
| Խաչքար | 1642 թ. | | 4.2/16.15.1 | Հ | շենքի հվ թևում ձգվող միջանցքում |
| Նկուղ | 1764 թ. | | 4.2/16.16 | S | |
| Ջրհոր | 7 դ. | | 4.2/16.17 | Հ | վրնրգ.՝ 1845 թ. |
| Խաչքար | 9 դ. | | 4.2/17.1 | Հ | տեղափոխված է Եղեգնաձորից, եկեղեցու հս-ամ մույթի մոտ, փայտե շրջանակի մեջ |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Փիլիպոս Հաղբակեցու | 1655 թ. | | 4.2/17.2 | Հ | եկեղեցու ներսում, խորանից ձախ |
| Զանգակատուն | 1790 թ. | | 4.2/17.3 | Հ | պատվիրատու՝ Խաչիկ Զնթուլյան Զուղայեցի |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Աստվածատուր Համադանցու | 1725 թ. | | 4.2/17.3.1 | Հ | զանգակատան մուտքից հվ |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Կարապետ Բ Ուլնեցու | 1729 թ. | | 4.2/17.3.2 | Հ | զանգակատան մուտքից հս |
| Եկեղեցի | 4-5 դդ. | | 4.2/17.4 | Հ | |
| Բնակելի տուն | 1894 թ. | | 4.2/17.5 | S | եկեղեցուց 40 մ հվ-ամ |
| Բնակելի տուն. Վանահոր տունը | 1894 թ. | | 4.2/17.6 | S | եկեղեցուց հվ-աե |
| Աղբյուր | 1960-ական թթ. | | 4.2/17.7 | S | բակում, Վանահոր տան մոտ ճարտ.՝ Ռ. Բարայեյան |
| Շինություն | 19 դ. վերջ | | 4.2/17.8 | S | թաղակապ նկուղներ |
| Գերեզմանոց | 4-19 դդ. | | 4.2/17.9 | S | եկեղեցուց 50 մ աե |
| Խաչքար | 1195 թ. | | 4.2/17.9.1 | Հ | եկեղեցու աե պարսպի տակ, արձանագիր, մեջտեղից կոտրված, կոտրված մասերը դրված են իրարից հեռու |
| Խաչքար | 1424 թ. | | 4.2/17.9.2 | Հ | եկեղեցու աե պարսպի տակ, արձանագիր, բեկոր |
| Խաչքար | 1481 թ. ? | | 4.2/17.9.3 | Հ | միանավ եկեղեցու |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|--|--------------------|-------------|-----------------------------|-------|--|
| | | | | | ամ կողմում, արձանագիր, տեղադրված՝ արձանագիր պատվանդանին |
| Խաչքար Ակորջանի | 1552 թ. | | 4.2/17.9.4 | Հ | եկեղեցուց աե, պարսպի տակ |
| Խաչքար Մարգարի | 16 դ. | | 4.2/17.9.5 | Հ | եկեղեցու բակում, երկատված կազմող՝ Սամվել |
| Խաչքար Մարտիրոս Էպիսկոպոսի | 16 դ. | | 4.2/17.9.6 | Հ | Վանահոր տան մոտ, հենած աե պարսպին, վերնամասը և ստորին ձախ հատվածը՝ կոտրված |
| Խաչքար | 16 դ. | | 4.2/17.9.7 | Հ | եկեղեցու աե պարսպի տակ, արձանագիր, հորինվածքի կենտրոնական հատվածը՝ խիստ հողմնահարված |
| Խաչքար Ղազարի | 16 դ. | | 4.2/17.9.8 | Հ | եկեղեցու աե պարսպի տակ, եզրագոտու աջ կողմը՝ վնասված, կենտրոնից ճաքած |
| Խաչքար Ազամաթի | 16 դ. | | 4.2/17.9.9 | Հ | եկեղեցու աե պարսպի տակ, արձանագիր, երկատված, երկատված մասերը՝ դրված կողք-կողքի |
| Խաչքար | 1692 թ. | | 4.2/17.9.10 | Հ | եկեղեցու աե պարսպի մոտ, արձանագիր, հողմնահարված |
| Պարիսպ | 1776 թ. 1894 թ. | | 4.2/17.10 | Հ | եկեղեցու շուրջը |
| Դարպաս | 16-17 դդ. | | 4.2/17.11 | Հ | եկեղեցուց 100 մ հս |
| Գավիթ | 1694 թ. | | 4.2/18.1 | Հ | |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Նահապետ Ա | 1705 թ. | | 4.2/18.1.1 | Հ | |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|---|-----------|------------------|----------------------------|-------|---|
| Եղեասցու | | | | | |
| Գերեզման Ամենայն Հայոց կաթողիկոս Աբրահամ Գ Կրտեացու | 1737 թ. | | 4.2/18.1.2 | Հ | |
| Գերեզմանոց | 19 դ. | | 4.2/18.2 | S | Եկեղեցու առ կողմում |
| Եկեղեցի | 4-5 դդ. | | 4.2/18.3 | Հ | Եկեղեցու հվ-ամ կողմում |
| Կոթող-ուղեցույց «Զվարթնոց» («Արծիվ») | 1957 թ. | 3 կմ առ | 4.2/19 | Հ | Երևան-Վաղարշապատ մայրուղու եզրին, քանդ.՝ Ե. Քոչար, ճարտ.՝ Ռ. Իսրայելյան |
| Հուշարձան Խաչատուր Աբովյանի | 1947 թ. | ք. մ. | 4.2/20 | S | N 4 դպրոցի առջև, ճարտ.՝ Զ. Տերտերյան |
| Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածների | 1970 թ. | Մեսրոպ Մաշտոց փ. | 4.2/21 | S | քանդ.՝ Դ. Միննյան, Գ. Եփրոյան, ճարտ.՝ Զ. Տերտերյան |
| Հուշարձան Կոմիտասի | 1969 թ. | կենտրոնում | 4.2/22 | S | կենտրոնական հրապարակում, քանդակագործ՝ Երվանդ Քոչար |
| Հուշարձան Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման համար 1921 թ. քաղաքացիական մարտերում զոհված կոմունարների | 1953 թ. | ք. մ. | 4.2/23 | S | քաղաքային զբոսայգում, Մայր տաճարից 80 մ հս ճարտ.՝ Ռ. Զուրբեցյան |
| Հուշարձան Մեսրոպ Մաշտոցի | 1981 թ. | կնտ. | 4.2/24 | S | կենտրոնական հրապարակում քանդակագործ՝ Լևոն Թորմազյան |
| Հուշարձան Անաստաս Միկոյանի | 1944 թ. | ք. մ. | 4.2/25 | S | քաղաքային զբոսայգում, քանդ.՝ Ա. Սարգսյան |
| Հուշարձան Ստեփան Շահումյանի | 1961 թ. | ք. մ. | 4.2/26 | S | համանուն քաղաքային զբոսայգում |
| Հուշարձան 1827 թ. Ռուս - Պարսկական | 1833 թ. | ամ մասում | 4.2/27 | Հ | ամ եզրին, Էջմիածին- |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|---|----------------|---|--------------------------|-------|---|
| պատերազմում զոհված ռուս մարտիկների | | | | | Արմավիր ավտոճանապարհին |
| Ճեմարանի շենք. Գևորգյան ճեմարանը | 1873 թ. | Արարատյան - Մովսես Խորենացի փ. խաչմերուկ | 4.2/28 | Հ | խաչմերուկից 80 մ հվ |
| Հուշարձան Ռաֆայել Ուսուկյանի | 1901 թ. | ք. մ. | 4.2/28.1 | Հ | Գևորգյան ճեմարանի առջև, քանդակագործ՝ Անդրեաս Տեր-Մարտիրոսյան , պատվիրատու՝ նախիջևանցի Ավետիք Պողոսյան |
| Հանրակացարան | 1879 թ. | | 4.2/28.3 | Հ | ճեմարանի շենքից 30 մ ան |
| Հիվանդանոցի շենք | 20 դ. սկիզբ | | 4.2/28.4 | Հ | ճեմարանի շենքից 120 մ հվ-ան, այժմ շենքում գործում է քաղաքային սանիտարա-էպիդեմիական կայանը |
| Ուսումնական մասնաշենք | 19 դ. վերջ | | 4.2/28.5 | Հ | ճեմարանի շենքից 170 մ ան |
| Մշակույթի տուն | 1954 թ. | Մեսրոպ Մաշտոց փ. | 4.2/29 | Տ | ճարտ.՝ Ս. Մանուկյան |
| Տուն-թանգարանի շենք. Հովհաննես Հովհաննիսյանի տուն թանգարանը | 19 դ. վերջ | կնտ. | 4.2/30 | Հ | քաղաքի կենտրոնական հրապարակից ամ |
| Հուշարձան Հովհաննես Հովհաննիսյանի | 1959 թ. | | 4.2/30.1 | Հ | տուն-թանգարանի առջև, քանդ.՝ Գ. Չուբարյան |
| Եկեղեցի Սբ. Գայանե | 630 թ. - 20 դ. | հվ մասում | 4.2/16 | Հ | կից է Կոմերիտմիության փ. |
| Եկեղեցական համալիր՝ Վաղարշապատի Սբ. Գրիգոր (Զվարթնոց) | 5-7 դդ. | 3 կմ ան | 4.2/13 | Հ | Երևան - Էջմիածին մայրուղուց 0,5 կմ հվ |
| Եկեղեցի Սբ. Հռիփսիմե | 618 թ. | Մեսրոպ Մաշտոց - Գր. Նարեկացի փ. խաչմերուկ | 4.2/17 | Հ | քաղաքի ան մասում |

| հուշարձան | կառուցված | վայր, հասցե | համարանիշ | նշան. | հավելյալ նշումներ |
|-------------------------------------|-----------|---------------------------------------|------------------------|-------|-------------------|
| Եկեղեցի Սբ. Շողակաթ | 1694 թ. | Նալբանդյան - Սահակ Պարթև փ. խաչմերուկ | 4.2/18 | Հ | |

Հարկ է նշել, որ նախատեսվող գործունեության տարածքում նախատեսվող գործունեության տարածքում պատմության և մշակույթի հուշարձաններ չկան:

3.10 Թափոնների կառավարում

Վախարշապատի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

| | Անվանումը | Վտանգավորության դասը | Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի» | Քանակը, տ/տարի |
|----|---|----------------------|---------------------------------|-------------------|
| 1. | Շինարարական աղբ, այդ թվում քանդման աշխատանքներից առաջացած | IV | 9120060001004 | 140մ ³ |
| 2. | տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) | IV | 9120040001 00 4 | 1 |

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բնակելի համալիրի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

4.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

4.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

4.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել
- շինությունների ծածկում անթափանց թաղանփով, համապատասխան բարձրության
- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

4.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
- Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ավտոցիստեռներով, պայմանագրային հիմունքներով:

4.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:

- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոխված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

4.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկողիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

4.3.5 Հակահրդեհային միջոցառումներ

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջոցառումների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջոցառումները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

4.3.6 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգալուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

4.3.7 Թափոնների կառավարում

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման ընթացքում աստիճանաշար շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

4.3.8 Տարածքի բարեկարգում կանաչապատում

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել:

Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատ տարածքների ոռոգումն ջուր կմատակարարվի հատուկ ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով: Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառափուտային բուսականության բարձր աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 1050 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | ՊԱՐԱՄԵՏՐԵՐ | ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ |
|-------------------------|--|---|
| Ընդհանուր դրույթներ | Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն | (a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրառել են հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ: |
| Շինարարական աշխատանքներ | Օդի որակ | (a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: |
| | Աղմուկ | (a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն: |
| | Թափոնների կառավարում | (a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել |
| Կեղտաջրերի հեռացում | Ջրի որակ | (a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով, |

| | | |
|---|---|--|
| | | <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:</p> |
| <p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p> <p>Տարածքի բարեկարգում/ կանաչապատում</p> <p>Աղմուկի և թրթռումների կառավարում</p> | <p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p> | <p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում <p>- կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;</p> <p>-ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար</p> <p>- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում</p> <p>- Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,</p> <p>- Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,</p> <p>- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:</p> <p>- Անհարաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;</p> |

| | | |
|-----------------------------|--|--|
| <p>Թափոնների կառավարում</p> | <p>▪</p> <p>Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;</p> <p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով</p> <p>հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ</p> | <ul style="list-style-type: none"> - Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը <p>Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <ul style="list-style-type: none"> - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար; |
|-----------------------------|--|--|

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

| Գործողություն | Նվազեցնող միջոցառումներ | Որտեղ իրականացնել | Ինչպես իրականացնել | Ժամանակամիջոց | Կատարող |
|--|---|--|---|---|-----------|
| Շինանյութերի մատակարարում | Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից | Մատակակարի հիմնարկում կամ պահեստում | Փաստաթղթերի ստուգում | Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում | Կապալառու |
| Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ | <ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում | <ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ | Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում | Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում | Կապալառու |
| Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում | <ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում | Մասնագիտացված ընկերություն | Գործընթացների գործունեության ստուգում | Մեխանիզմների շահագործման ընթացքում | Կապալառու |
| Հողային աշխատանքներ | - Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր | Շինհրապարակ | Գործընթացների ստուգում | Հողային աշխատանքների ընթացքում | Կապալառու |

| | | | | | |
|--|---|--|---|--|--|
| | | | | | |
| Իներտ շինանյութերի գնում | - Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից | Իներտ նյութերի պահեստ | Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում | Մատակարարման ընթացքում | Կապալառու, մատակարար |
| Կենցաղային աղբի առաջացում | - Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ | Շինհրապարակ | Արտաքին գնում | Շինարարության ողջ ընթացքում | Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն |
| Աշխատանքի անվտանգություն | - Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն | Շինհրապարակ | Ստուգման գործընթացներ | Աշխատանքների ողջ ընթացքում | Կապալառու, պատվիրատու |
| Տարածքի Կանաչապատում, բարեկարգում Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում | Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության Թփերի և այլ բուսականության նորմալ աճ վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր | Կառուցապատվող հողամաս Շինհրապարակ | Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին գնում Արտաքին գնում | Շինարարության Ավարտին Շինարարության ընթացքում | Կապալառու, Կապալառու, |

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արևանէտումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ձև N 1-2



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾՍՑԻՆ ԱՌԱՋԱՐԴԱՆՔ)**

Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք
(մարզ, համայնք)

N CPP0-0000-2133 28.07.2022թ.

Օբյեկտ

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման, ռիսկայնության աստիճանը՝ 4-րդ աշխատանքային նախագծային փաստաթղթերի մշակման համար:
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն (հակիրճ բնորոշումը, հզորությունը.. ռիսկայնության աստիճանը /կատեգորիան/, նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք Էջմիածին քաղաք, Շահումյան փողոց թիվ 75/4-6, ծածկագիր 04-002-0874-0074 վկայական 13062022-04-0007**
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **Կարեն Մկրտչյան /համասեփ. Ա.Մարոյան/
ՀՀ Արմավիրի մարզ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին Վազգեն Առաջինի փողոց 40 շենք 43բն, 44077777, yengibaryan.hrach@mail.ru**
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը **հայտ 15.07.2022թ. վկայական 13062022-04-0007**
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **3 տարի**
(N1 չավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՍՍԱՄԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է **խառը կառուցապատման գոտում**
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը **0,6953հա**
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը **ազատ տարածք**

(ոելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

**4. (*) Տրանսպորտային պայմանները
Շահումյան փողոց և Կարճիկյան փողոց**

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) նախագծվող և կից տարածքով անցնող ինժեներական հաղորդագծեր

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

Կարեն Մկրտչյան

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համ ձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տրածքներ (պահպանական գոտիներ) չկան

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

հարևան հողամասեր և շինություններ նայող ճակատներում բացվածքներ նախագծել նորմատիվ հեռավորությունների ապահովման դեպքում

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Մշակել բազմաբնակարան բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր

(Ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

պահպանել Շահումյան փողոցի կառուցապատման գիծը

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

կառույցի հեռ. հարակից շենք-շինություններից և հողամասերից նախատեսել գործող նորմատիվային պահանջներով

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

նախատեսել 1 նկուղային և մինչև 12 վերգետնյա հարկերով, առավելագույն բարձր. մինչև 46մ

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը /կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) /

շենքի համար 40%, ճան., սավվածքների սպասարկման համար մինչև 20%, ստորգետնյա հարկի կառ. համար մինչև 70%

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

40%

9.7. այլ պահանջներ
հնարավոր է մասնակի ավելի բարձր ծավալների շեշտադրում, տանիքը սպասարկող սենքերի համար

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները
Նախատեսել ստորգետնյա ավտոկայանատեղի իսկ առաջին հարկը հասարակական

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ
Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում
Կցվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ
 (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում
Կցվում է 110/35/10կՎ ե/կ-ի բջիջ 19
 (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում
Կցվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
 (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակ ուղյալի մատակարար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը
Կցվում է ---
 (համաձայն N1 Հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն
Վաղարշապատ համայնքի «ԲԿՎ»

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում
կազմակերպել ջրահեռացում
 (ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում
մշակել տարածքի բարեկարգման, կանաչապատման և ուղղաձիգ հատակագծման նախագիծ
 (լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր
երկաթբետոնե, կանոնավոր կտրվածքի տուֆաքար, երեսապատման սալիկ, ապակի, ամրան և այլն
 (շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ
ըստ նորմատիվ պահանջների
 (արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ
ըստ նորմատիվ պահանջների ապահովվել հրշեջ հիդրանտների առկայությունը
 (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ
նախատեսել հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու անհրաժեշտ

պայմաններ ՀՀ ՇՆ IV-07.01-2006 շինարարական նորմին համապատասխան

19. Երջակա միջավայրի պահպանում
ապահովել շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից
(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում
Էջմիածին համայնքի ավագանու 04.12.2018թ. թիվ 14 արտահերթ նիստի թիվ 97-Ն որոշման
պահանջներով կազմել շինարարության կազմակերպման նախագիծ, հազմել հողատարածքի
շրջադարձային կետերի նշահարման ակտ

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

3 տարի հնարավոր է մասնաշենքերի փուլային համաձայնեցում
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ
ՀՀ կառավարության 2015թ մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման հավելված 2-ի համաձայն պետական համալիր
փորձաքննություն այդ թվում ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա
ազդեցության փորձաքննություն
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում
կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում
ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ
(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ
Էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N1 Հավելվածի
89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում
Վաղարշապատի համայնքի ղեկավարի հետ
(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ
լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N1 Հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի
սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ
նախագիծը համաձայնեցման ներկայացնել երեք օրինակից


ՎԱՐԱՐՇԱՊԱՏ Դիանա Գասպարյան
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Digitally signed by PETROSYAN ARSEN 2107830070
Date: 2022.07.28 17:52:33 AMT

(ստորագրությունը, անունը, ազգանունը)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 13 հունիսի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՌՆԻԿԻ, ԱՆԻ ՍԱՐՈՅԱՆ ՀՈՎԻԿԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Վաղարշապատ Էջմիածին ք. Շահումյան փողոց 75/4-6

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրեր՝ 05.05.2018թ. ՍՄ 4432, 4433, 4434 , համայնքի ղեկավարի որոշում 30.05.2022թ. հ.796-Ա, 10.06.2022թ. հ.917-Ա

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-002-0874-0074

Մակերեսի չափը (հա)՝ 0.6953

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 13062022-04-0007, գաղտնաբառ՝ IM7BYLLSK48U

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|-----|----------------------|-------|---------|--------------------------|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՄԱՐՏԻՆ ՋԻՆՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ղեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 13062022-04-0007, գաղտնաբառ՝ IM7BVLLSK48U

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով



Արմավիրի մարզ
Վարդաշապատ համայնք
Էջմիածին քաղաք
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 04-002-0874-0074
Մասշտաբ 1: 1000



Կոորդինատներ

| | X | Y |
|----|--------------|--------------|
| 1 | 8440662.9945 | 4447708.8901 |
| 2 | 8440654.2700 | 4447715.7600 |
| 3 | 8440643.0200 | 4447725.5900 |
| 4 | 8440605.0600 | 4447757.2900 |
| 5 | 8440593.9870 | 4447733.3117 |
| 6 | 8440594.2947 | 4447733.0240 |
| 7 | 8440591.7738 | 4447727.5675 |
| 8 | 8440576.2559 | 4447693.9788 |
| 9 | 8440570.9295 | 4447682.4498 |
| 10 | 8440558.1377 | 4447654.7619 |
| 11 | 8440562.5859 | 4447652.7068 |
| 12 | 8440557.5112 | 4447641.7224 |
| 13 | 8440558.8681 | 4447637.8005 |
| 14 | 8440565.0349 | 4447632.4720 |
| 15 | 8440573.0933 | 4447625.5089 |
| 16 | 8440573.3548 | 4447625.8115 |
| 17 | 8440575.3961 | 4447624.0476 |
| 18 | 8440579.3324 | 4447620.6464 |
| 19 | 8440583.7950 | 4447616.7903 |
| 20 | 8440587.9679 | 4447621.6429 |
| 21 | 8440631.2383 | 4447671.9625 |



սպասարկման գրասենյակ Կ.Տ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼ.ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
«ՍՈՒՄԱԼԵՌ» ՍԱՍՆԱՃՅՈՒՂ
« ԷԶՄԻԱԾԻՆ » ԷԼ. ՑԱՆՑ»



ЗАО "ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ
ФИЛИАЛ " МУСАЛЕР "
"ЭЧМИАДЗИНСКАЯ ЭЛ. СЕТЬ

ք. Էջմիածին Մաշտոցի 138, հեռ. (0231) 5-58-00

թիվ _____

" _01_ " _08_ 2022թ.

Էջմիածին քաղաքի Վազգեն
Առաջին 402 43 բն բնակիչ Կարեն
Մկրտչյանին

Ի պատասխան Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Շահումյան փող. 75/4-6 հասցեի
դիմում

Կարեն Մկրտչյանի տարածքը սնումը հնարավոր է իրականացնել <<Էջմիածին>>
110/35/10Կվ ե/կ-ի բջիջ 15 10Կվ ուղղության Կարեն Մկրտչյանին պատկանող ենթակայանի 0.4Կվ
բ/վ-ից:

«Էջմիածին» էլ. ցանցի
գլխ. ճարտարագետ



Ա. Ալեքսանյան




«Հաստատում եմ»
Արտադրատեխնիկական բաժնի պետ՝
Ա. Մարտիրոսյան
09 08 2022թ.

Տեխնիկական պայման ՎՋ 4164 /2022
(Ջրամուղային և/կամ/ ջրահեռացման շրջանցման, նախագծման)

Մ. Արմավիր, ք. Վաղարշապատ, Շահումյան փող. 75/4-6
/Տարածքի հասցե/

Կարեն Մկրտչյան
Ամուն, ազգանուն/

04407777
/Հաստատումն է/



318967

| Համակարգ | Ջրագիծ | Կոյուղագիծ | Հրդեհաչիջում |
|--|---|--|--------------|
| Կոմունիկացիայի գտնվելու վայրը | 1.Շահումյան փողոց 75/4-6 տարածքում 2.Կարճիկյան փողոց | Կարճիկյան փողոց | |
| Գործող խողովակի տրամագիծը, ճնշումը, տեսակը | 1.d=150մմ, P=1.1 մքմ. պող. 2.d=200մմ, P=1.3 մքմ. պ/էք. | d=400մմ | |
| Միացման կետը | Շահումյան փողոց 75/4-6 տարածքով անցնող Ф150մմ ջրագիծը շրջանցելուց հետո՝ ջրամիացումը կատարել Կարճիկյան փողոցով անցնող Ф200մմ ջրագծից | Կարճիկյան փողոցով անցնող կոյուղագծին | |
| Միացման տրամագիծը | Համաձայն նախագծի | | |
| Ջրաչափի տրամագիծը, դասը և տիպը | | | |
| Այլ պահանջներ | 1.Ջրաչափական հանգույցի համար կառուցել դիտահոր 2.Առկա միացումները տեղափոխել շրջանցվող ջրագծի վրա 3.Ջրամիացումը կկատարվի մոր կառուցված ջրագիծը սահմանված կարգով շահագործման համձնելուց հետո | Կոյուղագծի միացման կետում կառուցել դիտահոր | Տես * կետը |
| Ջրամատակարարման գրաֆիկը | 8.00-14.00 | | |

Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, և դրանք համաձայնեցնել «Աեղիա Ջուր» ՓԲԸ-ի հետ:


Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը, դիմողի հայեցողությամբ, իրականացնում է «Աեղիա Ջուր» ՓԲԸ-ն կամ ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ դիմողի հաշվին: Կառուցված մոր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Աեղիա Ջուր» ՓԲԸ-ն՝ դիմողի հաշվին: Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի՝ գրանցման օրվանից սկսած: Այն ենթակա է երկարացման մինչև տեխնիկական պայմանի ժամկետի ավարտը՝ դիմողի կողմից մերկայացրած դիմումի հիման վրա:


Կառուցման ընթացքում, հողային աշխատանքներն իրականացնելիս, անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց բույլտվությունները և/կամ համաձայնությունները:


* Հրդեհաչիջումը նախատեսել համաձայն ՀՀԸՆ 40.01.02-2020թ. և ՀՀ Կատ. 08.08.2019թ թիվ 1025-Ն որոշման, թիվ 29 հավելվածի, հիդրոստի տեղադրման դեպքում կառուցել դիտահոր:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ հասցեում «Աեղիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ինքնահոս մատակարարվող ջրի ճնշումը սահմանազատման կետում չի ապահովում 1.0մքմ., ապա անհրաժեշտ է նախատեսել իմվերտորային պոմպ, համաձայն ՀԾԿՀ 378-Ն որոշման:

Տարածքով անցնող ջրագիծը շրջանցել համաձայն նախագծի:

«Էջմիածին» տեղամասի պետ՝  Ա. Խաչատուրյան

Ինժեներական խմբի պատասխանատու՝  Գ. Կարապետյան

Կատարող՝  Մ.Մամբետյան